№ 281 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇՈՐԵՔՇԱԲԹԻ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 281

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 բուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 կՕպ.

Թիֆլիսում դրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամենվեզով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱԾ 1912 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 բ., 10 ամսվանը՝ 9 բ., 9 ամսվանը՝ 8 բ., 8 ամսվանը՝ 7 բ., 7 և 6 ամսվանը՝ 6 բ., 5 ամսվանը՝ 5 բ., 4 ամսվանը՝ 4 բ., 3 ամսվանը՝ 3 բ., 2 ամսվանը՝ 2 բ., 1 ամսվանը՝ 85 կ. և 15 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 բուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն, և միեւնոյն ժամանակ 40 կ. նամակագրոշմ։

Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ԱՂԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

„ՄՇԱԿԻ" ԳՐԱՍԵՆԵԱԿԻՑ

Ի Նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիկական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեան գրասենեակին հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։

Այրի Անանա Բագրատունին իր որդիներով յայտնում է իր խորին շնորհակալութիւնը Կուսանաց անապատի մայրապետ՝ Հռիփսիմէ Թայիրեանցին և նոյն վանքի միաբանութեանը, քահանաներին, Մարիամեան-Յովհաննեան օրիորդաց դպրոցի յարգելի հոգաբարձութեանը, Արհեստաւորաց և Ներսիսեան հոգևոր դպրոցի հոգաբարձուներին, վերոյիշեալ դպրոցների ուսուցչական կազմերին, զանազան բարեգործական և մանաւոր հիմնարկութիւններին, բոլոր բարեկամներին ու ծանօթներին, որոնք իրանց ներկայութեամբ, ցաւակցական հեռագիրներով ու նամակներով պատուեցին անմոռանալի ամուսնու և հօր՝

ԱՐՍԷՆ ԱՒ.-ԲԱՒ. ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ

ՅԻՇԱՏԱԿԸ։

1182. 1—1

ՅԱՏԱԿՆԵՐԻ ԱՄԵՆԱԼԱՒ ԾԱԾԿՈՑ

ԼԻԲԱՎԵԱՆ ԼԻՆՕԼԵՈՒՄ

ՎԻԿԱՆԴԵՐ ԵՒ ԼԱՐՍՈՆ ԹՑԱՆԻ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐ. ԱԿՑ. ԸՆԿ.

ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ ԵՒ ՊԱՀԵՍՏ

առ. ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊ., № 9. ՏԷԼԷՖՕՆ 490. 989. 7—7

Հրաւէր

Հինգշաբթի, դեկտեմբերի 22-ին, երեկոյեան ժամը 8-ին, Բօրսայի դահլիճում կայանալու է ժողով՝ լսելու կաթողիկոսական պատգամաւորների զեկուցումները՝ էջմիածնի ընտրութիւնների մասին։ Տոմակները անուանական են։ Ցանկացողները կարող են ստանալ մուտքի տոմս «Մշակի» խմբագրութեան մէջ։ 2—1

Բերլինի համալսարանի

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

Ներքին հիւանդութիւններ՝
առանձնապէս կրծքի, ԹՈՔՈՒՏԻ և սրտի։
Սրսկումներ նաև տուբերկուլիններով։
Ընդունելութիւնը ամեն օր՝
առաւօտեան ժամը 9—11-ը և երեկոյեան ժամը 5—7-ը։
Католическая ул. д. № 10. Տէլէֆօն № 792.
(ա.օ.) առ. 989. 100—58

ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԵԱՆ ՓՇԵԱՑ ՊՍԱԿԸ

Մենք տեսանք մեծամասնութեան դափնիները։

Իսկ ինչ էր բաժին ընկել փոքրամասնութեան։

Փշեայ պսակ։

Այո, այն ժամանակ, երբ մեծամասնութիւնը տիրել էր հրապարակին և յաղթական դափնիներ էր պատուիրում իր համար, փոքրամասնութեան համար փշեայ պսակ էր պատրաստվում։

Հոգ չէ թէ մեծամասնութիւնը արհեստական կազմ ունէր, փոյթ չէ թէ նա հանդէս էր գալիս կեղծ ձայներով, հաշիւ չէ թէ նա մոռացել էր արդարութեան թելադրանքները. միայն թէ արտաքին աշխուժիւն և ձեւական յաղթութիւն՝ ինչ գնով էլ նրանք լինեն։

Ուրիշ էին փոքրամասնութեանը սահմանված կոչումն ու դերը։

Փոքրամասնութիւնը հարուստ էր իր ներքին առաքինութեամբ, խղճի մաքրութեամբ և գաղափարական կորովով։ Նա գիտէր, որ փշեայ պսակ էր ըսպասվում իրան, բայց նա անյողդողդ գնում էր իր ընտրած ճանապարհով։

Արդարև, երբ փոքրամասնութիւնը, վրդովված՝ Կ. Պոլսի ազգային ժողովի մշակած պատմական բանաձևով, բողոք էր յայտնում այդ վերջինի առիթով, մի՞թէ նա չը գիտէր, որ այդ բողոքը հաճելի չը պէտք է լինի Թիւրքահայ եղբայրների կողմից եկած պատգամաւորներին և մի՞թէ նա յոյս ունէր դափնիներ ստանալու։

Բողոքը խոստանում էր միայն փշեայ պսակ։

Կամ, երբ փոքրամասնութիւնը բողոքում էր ձայների կեղծման և նենգութեան դէմ, բերում էր վկայութիւններ կատարված գեղծումների մասին և ներկայացնում էր մէկը միւսից տուելի քսմնելի փաստեր, նա ինչ կարող էր սպասել իբրև տրիտուր իր քաղաքացիական քաջութեան։

Փշեայ պսակ միայն։

Կամ, երբ նա յիշեցնում էր գաղտնի քուէարկութեան սկզբունքի, փոքրամասնութեան բարոյական իրաւունքների և ժողովրդական ձայնի անխախտութեան թելադրանքների մասին, մի՞թէ նա չէր նախատեսում սպառած սրտեր, մեռած խղճմտանք և փշեայ պսակ։

Նախատեսում էր, բայց արիութեամբ գնում էր իր կոչմանը ծառայելու, պատգամաւորական իր պարտաւորութիւնը կատարելու։

Ծանր բօպէներ անցկացրեց փոքրամասնութիւնը, տանելով իր կոչման պատասխանատուութիւնը։

Ինչո՞ւ այդպէս։ Ինչո՞ւ չը գերադասեց նա համակերպվելու գրաւիչ առաջարկը։

Եւ արդարև, որքան անձնախորժ, մեղկաբնոյթ և անդորրախնդ վիճակ կարող էին խոստանալ թեանցուկ անելը մեծամասնականներին, ճարպահայեաց ժպիտներով բոլոր անպատեհութիւնների սրբագործելը, ազգային ժողովի բանաձևի անգուսպ դրուատելը, և այլն, և այլն։

Եւ մանաւանդ՝ ընտրութիւնների գլուխ գործոցի առիթով անպայման զմայլանք յայտնելը։

Ոչ, փոքրամասնութիւնը այդ ձիրքերից զուրկ դուրս եկաւ։ Շողոքորթելու, շոյելու, համակերպվելու, հաճոյանալու համար նա անընդունակ հանդիսացաւ։

Եւ թող տանի իր փշեայ պսակը։

Եթէ փոքրամասնութիւնը մասնակցեր ընտրութիւններին, նա կարող էր քառասուն ցանկի թեկնածուների հետ խաղալ ազատօրէն, թեքելով աջողութիւնը այս ու այն անձի կողմը։ Բայց նա չը կամեցաւ այդ խաղով զբաղվել։ Նա սուրբ պահեց իր բողոքների իմաստը և էութիւնը, նա ազատութիւն տուեց խրոխտացող մեծամասնութեանը, հանդէս գալու իր յոխորտանքների յաղթանակով, իր փափագելի ընտրելիով, իր ջանքերի պարծանքով։

Իսկ իրան բաժին վերցրեց միայն փշեայ պսակ։

Ա. Քալանթար

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

—o—

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կաթողիկոսական ընտրութեան իսկական պատկերը

IV

Պէտք է ասել, որ ընտրված կամ նշանակված թիւրքահայ պատգամաւորների մեծ մասը շատ և շատ հեռու էր լինելու բուն ժողովրդական ներկայացուցիչ, ժողովրդի իղձերը, տրամադրութիւնները, ցանկութիւնները արտայայտող։ Երբ Կ. Պոլսում Մանկունի արքեպիսկոպոսը ցոյց տուեց ինձ կաթ. տեղապահ Սուրէնեան սրբազանի հաւանութեամբ ուղարկված «համբաւաւոր և անկուսակցական ազգայինների» ցուցակը, երբ ես լսեցի Մանկունի սրբազանից, թէ այդ ցուցակի մէջ գտնված բոլոր անձինք յանձնարարված են իրան իբրև սաստիկ «անկուսակցականներ» և դրանք՝ են՝ Յովհ. Թումանեան, Լէօ, Ղ. Աղայեան, Գրիգոր Նէնէ Փափազեան, Գէորգ Խատիսեան, Տօշեան, Թ. Ղազարեան, Տ. Ռաֆայէլեան, բժ. Յ. Տէր-Միքայէլեան, ատամնաբոյժ Ն. Կաճկաճեան, Տ. Բէկզադեան, բժշկ Գ. Սաղեան, Սամսոն Յարութիւնեան, Ալէքսանդր Խատիսեան, Գէորգ Ամիրեան, Գէդէօն Ահարոնեան և այլք, ես հասկացայ, թէ հէնց սկզբից մենք գործ ենք ունենալու խարդախված, կեղծված ընտրութիւնների հետ, որ Թիւրքիայում շատ տեղեր օրինաւոր, ժողովրդական կերպով կատարված ընտրութիւններ չեն լինելու, ինչպէս լինում են մեզ մօտ. ես հասկացայ, թէ մեզ մօտ գալու են ոչ թէ ժողովրդի բուն ներկայացուցիչներ, այլ այնպիսի quasi-ներկայացուցիչներ, որոնց ոչ ժողովուրդն է ճանաչելու, ոչ իրանք ժողովրդին։ Եւ ճշմարիտ, ծիծաղելի է ասել, թէ Աղթամարի կաթողիկոսական վիճակի ժողովուրդը որևէ տեղեկութիւն ունենայ, թէ ով է Թ. Խղմալեանը. ծիծաղելի է ասել, թէ Վանայի հայերը ճանաչէին Գ. Ամիրեանին. ծիծաղելի է ասել, թէ Խարբերդի մէջ գտնվէր գտնէ մի հատիկ հայ, որ ճանաչէր Աբրահամ Դաստակեանին, կամ սա գտնէ իմանար, թէ Թիւրքիայի որ ծայրում, անկիւնում է գտնվում Խարբերդը։ Նոյնիսկ դժուար թէ Թէքիրդաղի հայերը օրևէ օրոշ դաղափար ունենան Ա. Խատիսեանի մասին, կամ Բասէնի հայերը երբևիցէ լսած լինեն Գէորգ Խատիսեանի մասին։

Թիւրքիայում, բացի մի քանի թեմերից—Կ. Պոլիս, Զմիւռնիա, Տիգրանակերտ, Գազաւիա, Կարին, Տրապիզոն, Եգիպտոս, Բաղդադ, Հին-Բայազիդ, Լիմ և Կռուց, Քղի—պատգամաւորների ընտրութիւնները կատարվել են միայն Մանկունի արքեպիսկոպոսի ցուցմունքով և մեծ մասամբ տեղական թաղական կամ կրօնական ժողովների ձեռքով, առանց թեմի ժողովրդի անմիջական մասնակցութեան կամ առանց գաւառական ազգային ժողովների։ Կաթողիկոսական պատգամաւորի այնպիսի ընտրութիւն, ինչպէս մեզ մօտ է լինում, երբ ընտրեալը, արդարև, կարող է ասել, թէ ինքը արտայայտիչ է ժողովրդի ցանկութիւնների, Թիւրքիայում չէ եղել։ Բիբենք մի քանի օրինակներ։ Վանում ընտրված է եղել գաւառական ժողովի ձեռքով Ե. Քալանտարեան, բայց նոյեմբերի վերջերին սա հրաժարվում է յայտնի պատճառով. և անա մի քանի օրից յետոյ հեռագրով յայտնվում է, որ նրա տեղ ընտրված է Տ. Յովհաննիսեանը։ Նշանաւոր խուժանապետ և շէմ-շիէջի (հովանոցավաճառ) Միհրդատ Հայկազնը, երբ մտնում է շոգենաւ Կ. Պոլսից Բաթում գալու, դեռ ընտրված չէ լինում պատգամաւոր որևէ թեմից. «ընկերները» նրան ճանապարհածախս տալով և նստեցնելով շոգենաւ, ուղարկելով Կովկաս յատկապէս այն միտքով, որ գայ խանգարէ Օրմանեանի թեկնածութիւնը և հակէ տատանվող ընկերների վրա, ասել են նրան. «Դու գնա, մենք քո տեղից ընտրել կը տանք քեզ մի որևէ թեմից և կը հաղորդենք»։

Այս փաստ է, իրողութիւն, այնքան հաստատ, որ շոգենաւում գտնված նրա միւս 19 ուղեկից պատգամաւորները անուանում են ղեկնրան «վէս-պատգամաւոր» և ասում՝ «մենք այժմ 19½ պատգամաւորներ ենք»։

Հասնելով Բաթում, ստացվում է հեռագիր Մանկունի արքեպիսկոպոսից, թէ իբր Միհրդատ Հայկազնը ընտրված է պատգամաւոր Զմշկածագից և Արաբկիրից։ Սինոդի ընտրողական գործում բացի այդ հեռագրից և Մանկունու թղթից ուրիշ որևէ դօկումենտ կամ արձանագրութիւն չը կայ, վաւերացնող թէ, արդարև, Միհրդատ Հայկազնին Արաբկիրի և Զմշկածագի թեմերը ընտրել են պատգամաւոր։ Եւ ոչ միայն չը կայ, այլ և ընտրութեան ժամանակ էլ միաձնում ստացվեցին այդ երկու թեմերից նամակներ, թէ պատգամաւոր ընտրված է ոչ թէ Միհրդատ Հայկազնը, այլ [illegible] Նիսեան և Խոսխոռունի—ուրեմն Միհրդատ Հայկազնը հանդիսացել է լոկ ինքնակոչ, կամ Մանկունի արքեպիսկոպոսը ապօրէն կերպով նշանակել է նրան պատգամաւոր երկու թեմերի։ Նոյնպէս և Բօլպարեան ոչ մի ընտրութիւն չէ կատարել և ոչ մի պատգամաւոր չէ ընտրել և նրա կողմից իբրև աշխարհական պատգամաւոր հանդէս եկած երևանցի Գէորգ Ամիրեանը և իբրև առաջնորդ հանդէս եկած Գր. վ. Պալաքեանը պատգամաւորներ [ճանաչված են լոկ Մանկունի արքեպիսկոպոսի գրութեամբ։

Առհասարակ Թիւրքիայի թեմերի կողմից իբրև պատգամաւորներ ցոյց տրված ռուսահայերից շատերի պատգամաւորական պաշտօնը վաւերացված է ոչ թէ տեղական ազգային գաւառական ժողովների ընտրական արձանագրութեամբ, այլ լոկ տեղապահ Մանկունի արքեպիսկոպոսի պաշտօնական գրութեամբ, թէ այն-ինչ անձն է պատգամաւոր այն-ինչ թեմի։ Սինոդը և պրոկուրորը բաւականացել են լոկ այդ գրութեամբ՝ ճանաչելու համար մէկին պատգամաւոր, առարկելով թէ իրանք իրաւունք չունեն միջամտել մի օտար պետութեան ընտրական ներքին կանոնների քննութեան, այլ նրանց համար բաւական է ունենալ հայոց պատրիարքարանի վկայագիրը։ Գուցէ, իրաւագիտական տեսակէտից, այս առարկութիւնը հիմնաւոր է. ես չեմ վիճում. ես միայն կամենում եմ ցոյց տալ, որ ռուսահայերից իբրև Թիւրքահայ թեմերի պատգամաւոր ներկայացող անձանց շատերի ընտրութիւնը եղել է այդ ձևով. և եթէ օրէնքը խստիւ պահանջ դնէր, որ պատգամաւոր ճանաչվեն միայն նրանք, որոնք ներկայացնեն տեղական ազգային ժողովների կողմից կատարված ընտրութեան օրինական արձանագրութիւններ, շատ հաւանական է, որ շատերն այդ պատգամաւորներից ճանաչվէին իբրև ապօրէն և ինքնակոչ։

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԱՐՕՐ"

Գրական-գիտական-գեղարուեստական-հասարակական եւ խաղաղասիրական

ԱՄՍԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱԾ 1912 Թ. ՀԱՄԱՐ

ԵՐԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Ամսագիրը հրատարակվելու է ամեն ամսվայ վերջին և բաղկացած է լինելու առնուազն 8 տպագրական թերթից (նաբօր) և աւելի՝ եթէ միջոցները ներեն։

Ռուսաստանի համար { Տարեկան բաժանորդագին — 6 բուբլի։ «Մշակի» տարեկան բաժանորդների համար 4 բուբլի։

Արտասահմանի համար { Եւրոպա — 20 ֆրանկ. «Մշակի» բաժ. համար 16 ֆր. Ամերիկա — 4 դոլլար. » » » 3 դոլ. Թիւրքիա — 6 բուբլի » » » 4 բ. Պարսկ. — 6 բուբլի » » » 4 բ.

Ամեն մի համարը առանձին արժէ 50 կոպ.։

Հասցէն. Тифлисъ, Сергіевская № 5. Редакція журнала „Аро̀ръ".
Tiflis, Rédaction de la Revue „Aror".

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

„ԱՐՕՐ"

1910 և 1911 Թ. Թ.

Ցանկացողները կարող են ստանալ «Արօրի» նախորդ, այն է 1910 և 1911 թ. թ. բոլոր համարները, վճարելով իւրաքանչիւր տարվան 4 բուբլի. իսկ «Մշակի» կամ «Արօրի» 1911թ. բաժանորդները՝ 3 բուբլի։

ՓՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ

ԶՈՒՐԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ

ԺՈՂՈՎՐԴ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ

Այսօր, չորեքշաբթի, դեկտեմբերի 21-ին ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏ. ԸՆԿ. ԽՈՒՄԲԸ կը ներկայացնէ

ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ

Դրամա 5 գործ., հեղ. Սուքմաթօվի, թարգ. Զ. Տէր-Գրիգորեանի։

Մասնակցում են. տ. տ. Գուլազեան, Զաբէլ, Մայսուրեան, Յամիկ և Սիրանոյշ, պ. պ. Աբէլեան, Ալիխանեան, Ալիխանեան II, Աղայեան, Աւետեան, Ղազարեան, Լաքա, Միրզոյեան, Մանուկեան, Յարութիւնեան, Շահխաթունի, Տէր-Առաքելեան և ուրիշ։

Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։
Տեղերի գնները 5—50 կոպ.։
Բեմադրեաց՝ Յ. Աբէլեան
Հերթ. կարգադրիչ՝ Ա. Թումանեան
1183. 1—1

կիւնումն է գանվում Խարբերդը։ Նոյնիսկ դժուար թէ Թէքիրդաղի հայերը օրևէ օրոշ դաղափար ունենան Ա. Խատիսեանի մասին, կամ Բասէնի հայերը երբևիցէ լսած լինեն Գէորգ Խատիսեանի մասին։

Թիւրքիայում, բացի մի քանի թեմերից—Կ. Պոլիս, Զմիւռնիա, Տիգրանակերտ, Գազաւիա, Կարին, Տրապիզոն, Եգիպտոս, Բաղդադ, Հին-Բայազիդ, Լիմ և Կռուց, Քղի—պատգամաւորների ընտրութիւնները կատարվել են միայն Մանկունի արքեպիսկոպոսի ցուցմունքով և մեծ մասամբ տեղական թաղական կամ կրօնական ժողովների ձեռքով, առանց թեմի ժողովրդի անմիջական մասնակցութեան կամ առանց գաւառական ազգային ժողովների։ Կաթողիկոսական պատգամաւորի այնպիսի ընտրութիւն, ինչպէս մեզ մօտ է լինում, երբ ընտրեալը, արդարև, կարող է ասել, թէ ինքը արտայայտիչ է ժողովրդի ցանկութիւնների, Թիւրքիայում չէ եղել։ Բերենք մի քանի օրինակներ։ Վանում ընտրված է եղել գաւառական ժողովի ձեռքով Ե. Քալանտարեան, բայց նոյեմբերի վերջերին սա հրաժարվում է յայտնի պատճառով. և անա մի քանի օրից յետոյ հեռագրով յայտնվում է, որ նրա տեղ ընտրված է Տ. Յովհաննիսեանը։ Նշանաւոր խուժանապետ և շէմ-շիէջի (հովանոցավաճառ) Միհրդատ Հայկազնը, երբ մտնում է շոգենաւ Կ. Պոլսից Բաթում գալու, դեռ ընտրված չէ լինում պատգամաւոր որևէ թեմից. «ընկերները» նրան ճանապարհածախս տալով և նստեցնելով շոգենաւ, ուղարկելով Կովկաս յատկապէս այն միտքով, որ գայ խանգարէ Օրմանեանի թեկնածութիւնը և հակէ տատանվող ընկերների վրա, ասել են նրան. «Դու գնա, մենք քո տեղից ընտրել կը տանք քեզ մի որևէ թեմից և կը հաղորդենք»։

Այս փաստ է, իրողութիւն, այնքան հաստատ, որ շոգենաւում գտնված նրա միւս 19 ուղեկից պատգամաւորները անուանում են ղեկնրան «վէս-պատգամաւոր» և ասում՝ «մենք այժմ 19½ պատգամաւորներ ենք»։

Հասնելով Բաթում, ստացվում է հեռագիր Մանկունի արքեպիսկոպոսից, թէ իբր Միհրդատ Հայկազնը ընտրված է պատգամաւոր Զմշկածագից և Արաբկիրից։ Սինոդի ընտրողական գործում բացի այդ հեռագրից և Մանկունու թղթից ուրիշ որևէ դօկումենտ կամ արձանագրութիւն չը կայ, վաւերացնող թէ, արդարև, Միհրդատ Հայկազնին Արաբկիրի և Զմշկածագի թեմերը ընտրել են պատգամաւոր։ Եւ ոչ միայն չը կայ, այլ և ընտրութեան ժամանակ էլ միաձնում ստացվեցին այդ երկու թեմերից նամակներ, թէ պատգամաւոր ընտրված է ոչ թէ Միհրդատ Հայկազնը, այլ [illegible] Նիսեան և Խոսխոռունի—ուրեմն Միհրդատ Հայկազնը հանդիսացել է լոկ ինքնակոչ, կամ Մանկունի արքեպիսկոպոսը ապօրէն կերպով նշանակել է նրան պատգամաւոր երկու թեմերի։ Նոյնպէս և Բօլպարեան ոչ մի ընտրութիւն չէ կատարել և ոչ մի պատգամաւոր չէ ընտրել և նրա կողմից իբրև աշխարհական պատգամաւոր հանդէս եկած երևանցի Գէորգ Ամիրեանը և իբրև առաջնորդ հանդէս եկած Գր. վ. Պալաքեանը պատգամաւորներ [ճանաչված են լոկ Մանկունի արքեպիսկոպոսի գրութեամբ։

Առհասարակ Թիւրքիայի թեմերի կողմից իբրև պատգամաւորներ ցոյց տրված ռուսահայերից շատերի պատգամաւորական պաշտօնը վաւերացված է ոչ թէ տեղական ազգային գաւառական ժողովների ընտրական արձանագրութեամբ, այլ լոկ տեղապահ Մանկունի արքեպիսկոպոսի պաշտօնական գրութեամբ, թէ այն-ինչ անձն է պատգամաւոր այն-ինչ թեմի։ Սինոդը և պրոկուրորը բաւականացել են լոկ այդ գրութեամբ՝ ճանաչելու համար մէկին պատգամաւոր, առարկելով թէ իրանք իրաւունք չունեն միջամտել մի օտար պետութեան ընտրական ներքին կանոնների քննութեան, այլ նրանց համար բաւական է ունենալ հայոց պատրիարքարանի վկայագիրը։ Գուցէ, իրաւագիտական տեսակէտից, այս առարկութիւնը հիմնաւոր է. ես չեմ վիճում. ես միայն կամենում եմ ցոյց տալ, որ ռուսահայերից իբրև Թիւրքահայ թեմերի պատգամաւոր ներկայացող անձանց շատերի ընտրութիւնը եղել է այդ ձևով. և եթէ օրէնքը խստիւ պահանջ դնէր, որ պատգամաւոր ճանաչվեն միայն նրանք, որոնք ներկայացնեն տեղական ազգային ժողովների կողմից կատարված ընտրութեան օրինական արձանագրութիւններ, շատ հաւանական է, որ շատերն այդ պատգամաւորներից ճանաչվէին իբրև ապօրէն և ինք-

նակոչ։ Ես չեմ կարծում, թէ այդ ժամանակ Թիւրքահայերին բոլորովին անծանօթ անձինք, ինչպէս Ա. Դաստակեան, Գ. Խատիսեան, Գ. Ամիրեան, բժ. Յով. Տէր-Միքաելեան, բժ. Յովհաննէսեան, Տ. Բէկզադեան և այլք ընտրվէին պատգամաւոր։

Ես ընդունում եմ, որ մի որևէ Թամգաբայի և Ցցպտէրի թեմ ընտրէր Վրթանէս Փափազեանին, որովհետև ինչ և լինեն Վրթանէս Փափազեանի բարոյական յատկութիւնները, բայց նա, իբրև գրող, անշուշտ յայտնի է Թիւրքահայերին։ Ընդունում եմ, երբ մի որևէ թեմ ընտրում է պատգամաւոր Լէօին, Ս. Յարութիւնեանին, Ալ. Խատիսեանին, Ալ. Քալանթարին, Հ. Առաքելեանին, բժ. Շահանին, Ս. Զէրքէզեանին, որովհետև Թիւրքիայի հայութեան մէջ այդ անձինք առաւել կամ նուազ չափով յայտնի են իբրև գրողներ, հրապարակախօսներ, գործիչներ։ բայց երբ ընտրվում է պատգամաւոր մի Ա. Դաստակեան՝ Խարբերդից, մի Գրիգոր Սաղեան՝ Շաբին-Գարահիսարից, մի Տիգրան Բէկզադեան՝ Սղերդից, մի Գէորգ Խատիսեան՝ Բաչէնից, մի Սիմէօն Տէր-Մինասեան, Եդեսիայից,—ես ասում եմ, թէ դա կեղծեալ, դա խարդախեալ ընտրութիւն է, որովհետև Խարբերդը, Շաբին-Գարահիսարը, Սղերդը, Բաչէնը, Եդեսիան լսելով չեն լսել այդ մարդկանց անունները, չեն ճանաչում նրանց, և նրանք էլ չեն ճանաչում, չը գիտեն այդ գաւառները։ Ընդունում եմ նոյնպէս և շատ հասկանալի եմ դառնում, երբ Բայազիդի թեմը պատգամաւոր է ընտրում Խ. Աֆրիկեանին, որովհետև նա ինքը ծնիկ է այդ թեմի, ունի առևտրական կապեր, հետևաբար թեմի ժողովուրդը ճանաչում է նրան. բայց չեմ կարող ընդունել, երբ ասվում է, թէ Բոլգարիայի հայերը պատգամաւոր են ընտրել երևանցի Գէորգ Ամիրեանին, որին բոլգարահայերը ամենևին չեն ճանաչում և որի անունը նրանք բնաւ չեն լսել։

Հետևեալ դէպքը ցոյց է տալիս, թէ որքան անլրջաբար են վերաբերվել Թիւրքահայերը դէպի կաթողիկոսական պատգամաւորի ընտրութիւնը։

Ոմն շուշեցի Սիմէօն Տէր-Մինասեան, տեսնելով որ ինքը մոռացված է հանրաւաւոր ցուցակի մէջ, դիմում է Մանկունի տեղապահին և նամակներ է տալիս կ. Պոլսի հայ թերթերի մէջ, որ եթէ որևէ թեմ իրան պատգամաւոր ընտրէ, ինքը պատրաստ է ճանապարհածախսը հոգալ իր գրպանից, և որպէսզի հասկացնէ ում անկն է, թէ ինքն ինչ կարգի մարդկանց է պատկանում, նա յայտնում է, որ ձայն կը տայ յօգուտ Դուրեան և Սուրէնեան սրբազաններին։ Եւ բաւական է լինում այդ յայտարարութիւնը մի բաղդախնդիր անձի կողմից գրված, որ Եդեսիայի ազգային վարչութիւնը իսկոյն ընտրէ նրան պատգամաւոր, առանց իմանալու թէ ինչ անձն է նա, ինչ յատկութիւնների տէր։

Ահա ինչ սկզբունքներով են ընտրվել Թիւրքիայի շատ թեմերում պատգամաւորներ։ Չէ եղել ոչ ընտրողութիւն, ոչ խորին գիտակցութիւն, ոչ լրջութիւն։ Շատ առաջնորդների հրամայել են ի վերուստ՝ ընտրեցէք Հմայեակ վարդապետին, Ռուբէն աբեղային, Գրիգորիս վարդապետին, Արշակ քահանային, Ալիխանեան քահանային — միանգամայն անյայտ անձաւորութիւններ Թիւրքիայում—և առաջնորդները, փոխանորդները ընտրել են և գլխից դուրս արել։

Աշխարհական պատգամաւորներ բուն Թիւրքիայից եկել էին ընդամենը 20 հոգի, իսկ եկեղեցական պատգամաւորներ՝ 16 հոգի, ուրեմն ընդամենը 36 հոգի։ Այդ 36 պատգամաւորների մէջ միայն մի քանի անկախ, ինքնուրոյն անձինք կային, ինչպէս Զիթիթ-Սարաֆ, Վ. Թէքէեան, Հայկ Անտօնեան, Յ. Գարամանեան, Տ. Գույումճեան, Բարգէն եպիսկոպոս, Հրանդ վարդապետ, Տիրայր վարդապետ, Ներսէս քահանայ, Սմբատ եպիսկոպոս։ Մնացածները կատարեալ բարոյական ոչնչութիւններ էին, մանեկէններ, խրատուիլակներ, որոնք ոչխարի նման գնում էին Ս. Յարութիւնեանի, Վ. Փափազեանի, Միհրդատ Հայկազնի և Եր. Տէր-Անդրէասեանի ետևից և գործում էին՝ ինչպէս այդ 4 խուժանապետները շարժում էին մատները։

Ահա այսպիսի պայմաններում և այսպիսի անձանց հետ գործելու համար մենք հասանք Էջմածին։ Մենք ունէինք մեր դէմ մի շատ փոքր թիւ ազնիւ, գիտակից հայառակորդներ։ մեր առաջ տեսանք մեծ մասամբ կամ ոչխարամիտ անձանց, կամ թայֆայական, կուսակցական նեղ ձգտումներով համոզված անձանց, որոնց համար միայն մի նշանաբան կար—տապալել Օրմանեանի կանդիդատութիւնը, իսկ այնուհետև թէկուզ ամենայտեղ՝ անարժան հոգևորականին ընտրել կաթողիկոս։

Մենը այդ նեղ կուսակցականներից ընտրոշեց իրանց նշանաբանը այս խօսքերով. «Մի ընտրէք Օրմանեանին, իսկ այնուհետև ընտրեցէք թէկուզ սատանային, մեզ համար միևնոյն է»։

Եւ այսպիսի հասկացողութեամբ մարդիկ եկել էին ընտրել ամենայն հայոց կաթողիկոս։

Հ. Առաքելեան

ԴՐՈՒԹԻՒՆԸ

Ոչ հաճելի, ոչ էլ զէթ փոքր չափով տանելի։

Խեցգետնի ընթացք ենք բռնել, շեղ ի շեղ, յետ ու յետ։

Ո՞վ մտքով կը տանէր, որ 1911-ի մեր ընտրութիւնը մեզ հետ՝ 1800-ի առաջին քառորդը պիտի տանէր։

Հարիւր տարով դէպի յետ սողալ։

Եւ սակայն արինք այդ տարադէպ և ասողջ մտքին անհասանելի շարժուածքը և կամ, նորերի լեզուով ասենք, ժեստը։

Տղամարդ էինք, հա։ Ո՞վ է այն համարձակը, որ սիրտ անէ մեզ ասելու այն ճշմարտութիւնը, թէ մենք մեր աչքի վերևը յօնք ունենք։

Բարի է։ Այժմ տեսնենք, թէ ինչ կարող ենք անել։

Ցուսալ արդեօք, թէ այդպիսի ընտրութեան հանգամանքն ի նկատ, ընտրելին աւելի քաջամիտ և աւելի առողջադատ կը լինի՝ մի սքանչելի հակադիր շարժուածքով, իր համար մի մեծագոյն փառքի ժեստով, իր շնորհակալութիւնը մատուցանել ընտրողներին և հրաժարվել իրան մատնանշված գահիցը, որ մատուցվում է ոտը կոտրած և կամ դա նուազն խիստ խախտուած։

Ատուած, և աշխարհի էլ բոլոր մեծութիւնները ու սրբութիւնները վկայ, որ այդ ժեստը նրան ամենաքաջամբաւ և ամենափառապատակաս փառքի կատարը կը բարձրացնէ։

Ի՞նչ է մի իշխանաւոր, մի կաթողիկոս, որ ժողովրդով պիտի կառավարէ և ժողովրդի համակրութեամբն ու աջակցութեամբը պիտի հզօր ու արդիւնաւոր ու փառաւոր լինի, ու նա այդ ժողովրդի խոկական ձայնովն ու ցանկութեամբը չէ կոչված իշխանական, կաթողիկոսական գահի վրա։

Ճշմարիտ է, եղել են պատմական բացէներ, որոնք գահի վրա բերել են մարդիկ առանց ժողովրդի քուէին. և եղել են այդպիսի մարդկանց այնպիսիք, որոնք այդ կերպ ձեռք բերած իշխանութիւնը այնպէս են շահաւէտ կացրել ժողովրդին, որ սա նրանց իր պանթէօնական տաճարները մուծելու արժանի է դատել։

Եթէ դեկտեմբերի 13-ի հանգամանքով ընտրեալը ճանաչում է իր մէջ այդպիսի մի պանթէօնարժան ընորհ, թերևս իրաւունք համարէ լբան՝ սատրաղասել այդ հանգամանքը իր շնորհքին. այլապէս՝ իր մեծագոյն փառքը վերագոյն ցոյց տուած սխրալի շարժուածքը, ժեստը կը լինի։

Ա. Մ. Եղեկեան

ԱՍՏՐԱԽԱՆԻ ԹԵՄՆ ԻՆՉՈ՞Ւ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ ՉՈՒՆԵՐ ԿԱԹ. ԸՆՏՐՈՒԹԵԱՆԸ

Աստրախան, 14 դեկտեմբերի

Դեկտ. 3-ի ծխ. ժողովում, նախ քան օրակարգի հարցերին անցնելը, Ղ. Մամաջանեանը հարցանդնում արեց, թէ ճիշդ է արդեօք, որ կաթ. ընտրութիւններին Աստրախանի թեմը իր աշխարհական պատգամաւորը չի ունենայ Էջմիածնում, որովհետև լուր էր տարածվում, որ մեր պատգամաւոր Ն. Սաթունեանը, դատաստանի տակ լինելու պատճառով, անկարող էր կաթողիկոսական ընտրութեանը մասնակցել։ Այդպիսի պայմաններում պէտք է աշխատել, որ նրա անձնափոխանորդ Ն. Աւագեանը գնայ Էջմիածին։

Պարզվեց, որ ճիշդ է, թէ օրինական արգելքներ կան յիշեալ ընտրութիւնը Ն. [illegible] ճիշդ է, որ անձնափոխանորդ Ն. Աւագեանը նոյեմբերի 20-ին հեռագիր է ստացել Եկատերինոդարից կաթողիկոսական պատգամաւոր Ն. Սաթունեանից հետևեալ բովանդակութեամբ. «Պատրաստվիր ճանապարհ ընկնել Էջմիածին. զուցէ ես չը կարողանամ գնալ Պետերբուրգ կանչված լինելուս պատճառով Դաշնակցութեան գործով։

Աւագեանը Սաթունեանին համաձայնութիւն է տուել գնալ այն դէպքում, եթէ նա բոլորովին կը հրաժարվի գնալուց, բայց որովհետև Սաթունեանը այդ հեռագրին չէ պատասխանել, ուստի անձնափոխանորդը Աւագեանն էլ լսել է և ոչ օրի չէ դիմել։

Յայտնված թեր և դէմ կարծիքներից ժողովը եկաւ հետևեալ եզրակացութեան. իսկոյն հեռագրական դիմումն անել Էջմիածին թեմիս առաջնորդին և այդ հարցի պարզաբանումը խնդրել, որի հետևանքն եղաւ այն, որ թեմ. առաջնորդից դեկտ. 3-ի գիշերը ստացվեց հեռագիր, որ Ն. Սաթունեանը ընտրութիւններին չէ կարող մասնակցել։

Անձնափոխանորդ Աւագեանն էլ հրաժարվեց գնալ ճանապարհի հեռաւորութեան և ժամանակի կարճութեան պատճառով։

Ահա այսպէս՝ մի անագին թեմ զրկվեց իր օրինական քուէն տալուց և իր ներկայացուցիչն ունենալուց Կաթողիկոսի ընտրութեանը։ Աստրախանի հասարակութեան բանիմաց մասը խիստ վրդովված է 1) հոգևոր բարձր իշխանութիւնից, որ մինիստրութեան բացատրութիւնը չէ հաղորդել Աստրախանի թեմին, 2) թեմական առաջնորդից, որ էջմիածնում այդ հանգամանքին անձամբ ծանօթանալով՝ իսկոյն չէ կարգադրել, որ անձնափոխանորդը շուտափոյթ մեկնի էջմիածին, 3) պատգամաւոր Ն. Սաթունեանից, որ իրաւաբան լինելով հանդերձ՝ ի նկատի չէ առել իր հանգամանքները և չէ հրաժարվել ընտրվելուց, և 4) մասամբ էլ անձնափոխանորդ Ն. Աւագեանից, որ անիոյթ է գտնվել և իր ժամանակին դիմում չէ արել ում հարկն է, իր իրաւունքները վերահաստատելու, պատգամաւորին փոխարինելու համար։

Բայց ինչով է մեղաւոր ամբողջ թեմը և ինչու պիտի զրկվէր իրան վերապահված ձայնաւորութեան անվիճելի իրաւունքից։

Գ. ք. Մկրտումեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

19 դեկտեմբերի

Պետերբուրգ.—Տեղեկատու բիւրօն լիազօրված է յայտնելու, թէ ֆրանսիական կառավարութիւնը երբէք չէ դիմել կայսերական արտաքին գործերի մինիստրութեանը՝ գանգատվելով Պէկինի ռուսաց դեսպան Կորսաովեցի դէմ։ Հետևաբար այդ մասին արտաստամանեան ու ռուսական լրագիրներում լոյս տեսած տեղեկութիւնները սխալ են։

Կ. Պոլիս.—Սուլթանը շեյխ-ուլ-իսլամ նշանակեց Եգիպտոսի մեծ կադը Նէշիմ-էֆէնդիին։ Զինուորական մինիստրը կը մնայ Մահմուդ-Շեվքէթ փաշան։ Օպպոզիցիան վճռել է շարունակել օբստրուկցիան։

Այլոն պատգամաւորները դուրս եկան «Մ. և Ա.» կոմիտէի կուսակցութիւնից։ «Թանին» քննադատում է օպպոզիցիա կուսակցութեան քաղաքականութիւնը։ Թիւրքական բոլոր մացած լրագիրները պնդում են, թէ տարաձայնութիւնները ծնունդ են «Մ. և Ա.» կոմիտէի անհաշտութեան։ Փողոցներով շրջում են ժանդարմների խմբեր։

Օսմանեան գործակալութիւնը հերքում է ռուսաց լրագիրների այն մեղադրանքը, թէ իբր Թիւրքիան մեղսակից է Պարսկաստանում կատարվող հակառուսական անկարգութիւններին, և յայտնում է, թէ օսմանեան կառավարութիւնը շարունակ լոյսեալ խորհուրդներ է տուել Պարսկաստանին յօգուտ հաշտութեան ու չափաւորութեան։

Բելգրադ.—Կրագուվայ-Նիշ գծի վրա կառուցվող մեծ տունելը փլվեց 15 մետր տարածութեան վրա։ Փլատակների տակ մացին 19 բանւոր։

Վիեննա.— Դատական - բժշկական մասնաժողովը վկայում է, որ գերեզմանատանը գտնված գանգը նման է իշխան Ալէքսանդրի յափշտակված գանգին։

Ոստիկանութիւնը ենթադրում է, թէ գանգը որևէ տեղից է բերված։

Հռոմ.—Փակվեց գեղարուեստի միջազգային ցուցահանդէսը։

ՀԵՌԱԼՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. գործ.)

19 դեկտեմբերի

Պէկին.—Մամուլը տպել է մինիստրների խորհրդի՝ մանջուրական դրօշակակիր զօրաբանակների հրամանատարներին ուղղված այն հրահանգը [illegible] վկայելով կառավարութեան կրիտիկական դրութիւնը, բացատրում է, որ եթէ կայսրը, ինչպէս հինաւուրց մեծ միապետները, հրաժարվի գահից, այն ժամանակ այդ կը լինի մեծագոյն յարգանք առ այդօրինակ պանծալի վարմունքը և ընաւ չի զուգորդվի մացած դինաստիաների անկման հետ. մանջուրները այդպիսի դէպքում կարող են միանալ չինացիների հետ՝ ընդհանուր աշխատանքի ձեռնարկելով հայրենիքի բարիքի համար։ Խորհուրդը զանազան ծուռ մեկնութիւններից խուսափելու նպատակով խնդրում է հրամանատարներին այդ մտքով բացատրութիւններ տալ զօրքերին, պարզելով՝ թէ կառավարութիւնը ամեն կերպ հոգում է գոյութեան միջոցներ հայթայթել զօրքերին։

20-րդ զօրաբանակի զօրամասերը Լուանչժօուից հեռագրեցին Զիթլիի դաւառական ժողովին, թէ համակիր են հանրապետութեան և հրաւիրում են պատգամաւոր՝ բանակցութեան համար։

Հին զօրքերի Տեանցզինի հրամանատարը յանուն սահմանադրական միապետութեան գաղափարի կոչմակերպում է Զիթլիի պաշտպանութիւնը ընդդէմ հանրապետականների։

Զիքիու.—Բերդում նորից ռումբ պայթեց։ Սպանվեցին 2, վիրաւորվեցին մի քանի մարդ։

Յոկոհամա.—Խուբէյի փոխարքան մեկնեց Պէկին։

Կայսերական զօրքերը հրաժարվում են յետ նահանջել։ Դեկտ. 18-ի ամբողջ օրը հրացանաձգութիւն էր։

Շանխայ.—Խաղաղ կոնֆերէնցիան իր զբաղմունքները շարունակում է։ Վճռված է դումարել ազգային ժողով կառավարութեան եղանակը սահմանելու՝ բոլոր գաւառների, եւ Մօնդոլիայի ներկայացուցիչների մասնակցութեամբ։ Կառավարութեան մէջ մասնակցելու են և Տիբէտը, և Զինաստանին ենթակայ բոլոր երկիրները։ Պատգամաւորների մեծ մասը արդէն Նանխայում է, մնացածները կանչված են հեռագիրներով։ Սունեատսէնը ընտրված է ժամանակաւոր հանրապետական կառավարութեան պարագլուխ։

Խարբին.—Ցիցիկարի նահանգապետը հաղորդագրեց, թէ Մուկդէնում կանոնաւոր զօրքից մացել են 1000 մարդ, մացածները փախել են։ Նահանգապետը խնդրում է ուժեղացնել զօրքերի կազմը։

Մուկդէնից տեղեկացնում են, որ ծպտեալ կերպով այնտեղ են գնացել այրի կայսրուհին և կայսրը։ Նանկինում յեղափոխականների պարապուլների խորհրդակցութեանը Մօնդոլիայի վերաբերութեամբ վճռվել է Մօնդոլիան իբրև անկախ նահանգ մացնել չինական հանրապետութեան կազմը, վերականգնելով ինքնիշխանութիւնը Զինասատանի խգաղաղացումից յետոյ։

Կօշաղաչ.—Ուլեասուտայի մօնդոլները, հետևելով Ուրգի օրինակին, իրանց յայտարարել են անկախ նահանգ և առաջարկել են չինական Ցզեանցզունին մեկնել Ուլեասուտայից։ Ցզեանցզունը մերժեց կատարել այդ պահանջը։ Մօնդոլները դիմեցին ռուսաց հիւպատոսի միջնորդութեան։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

19 դեկտեմբերի

Լօնդոն.—Ցիցիկարի նահանգապետը հաղորդագրեց, թէ Մուկդէնում կանոնաւոր զօրքից մացել են 1000 մարդ, մացածները փախել են։ Նահանգապետը խնդրում է ուժեղացնել զօրքերի կազմը։

Մուկդէնից տեղեկացնում են, որ ծպտեալ կերպով այնտեղ են գնացել այրի կայսրուհին և կայսրը։ Նանկինում յեղափոխականների պարապուլների խորհրդակցութեանը Մօնդոլիայի վերաբերութեամբ վճռվել է Մօնդոլիան իբրև անկախ նահանգ մացնել չինական հանրապետութեան կազմը, վերականգնելով ինքնիշխանութիւնը Զինասատանի խգաղաղացումից յետոյ։

Կօշաղաչ.—Ուլեասուտայի մօնդոլները, հետևելով Ուրգի օրինակին, իրանց յայտարարել են անկախ նահանգ և առաջարկել են չինական Ցզեանցզունին մեկնել Ուլեասուտայից։ Ցզեանցզունը մերժեց կատարել այդ պահանջը։ Մօնդոլները դիմեցին ռուսաց հիւպատոսի միջնորդութեան։

Խարբին.—Ցիցիկարի նահանգապետը հաղորդագրեց, թէ Մուկդէնում կանոնաւոր զօրքից մացել են 1000 մարդ, մացածները փախել են։ Նահանգապետը խնդրում է ուժեղացնել զօրքերի կազմը։

Մուկդէնից տեղեկացնում են, որ ծպտեալ կերպով այնտեղ են գնացել այրի կայսրուհին և կայսրը։ Նանկինում յեղափոխականների պարապուլների խորհրդակցութեանը Մօնդոլիայի վերաբերութեամբ վճռվել է Մօնդոլիան իբրև անկախ նահանգ մացնել չինական հանրապետութեան կազմը, վերականգնելով ինքնիշխանութիւնը Զինասատանի խգաղաղացումից յետոյ։

Կօշաղաչ.—Ուլեասուտայի մօնդոլները, հետևելով Ուրգի օրինակին, իրանց յայտարարել են անկախ նահանգ և առաջարկել են չինական Ցզեանցզունին մեկնել Ուլեասուտայից։ Ցզեանցզունը մերժեց կատարել այդ պահանջը։ Մօնդոլները դիմեցին ռուսաց հիւպատոսի միջնորդութեան։

Դիպլոմատիական շրջաններում ստացվել է պաշտօնական հաստատուն հեռագիր Թաւրիզից՝ Շերազի բրիտանական հիւպատոս Սմարտի կեանքի դէմ արած փորձի մասին։ Քաղաքական շրջաններում առանձին նշանակութիւն են տալիս այդ դէպքին, որովհետև դա գալիս է նորից ապացուցանելու եւրօպական հասարակական կարծիքին, որ Պարսկաստանը հասել է կատարեալ քայքայման դրութեան, որի դէմ կռիւ մղելը Պետերբուրգի և Լօնդօնի կաբինէտների գլխաւոր հոգածութեան առարկան է դառնալու։ Ներկայումս Պետերբուրգի և Լօնդօնի կաբինէտների միջև բանակցութիւններ են վարվում այն կոլէկտիվ քայլերի մասին, որ անվիլու են շուտափոյթ հանգստութիւնը և կարգը վերականգնելու համար ռուսական և անգլիական ազդեցութեան շրջաններում։ Պարսից կառավարութեանը արդէն հաղորդված է այն մասին, որ Թաւրիզում ռուս զօրքերի վրա դաւճանօրէն յարձակման գործի քննութիւնը կատարելու են բացառապէս ռուս զինուորական իշխանութիւնները, և Թէհրանի կառավարութեանը միայն տեղեկութիւն կը տրվի քննութեան հետևանքների մասին։

Թէհրան.—Թաւրիզի դէպքերը և անգլիական հիւպատոսի սպանութիւնը սարսափում են պարսից կառավարութեանը երկիւղ կրել Անգլիայի և Ռուսաստանի նոր յարձակողական քայլերից։

Լուրերի համեմատ, Թէհրան արշաւեց 200 մարդուց բաղկացած ռուսական զօրաբաժինը։ Զօրաբաժնի գալու նպատակն է անկարգութիւնների առաջն առնել Հասանի տօնին։ Քաղաքում հանգստութիւն է տիրում։ («Р. В.»)

«Պետերբուրգում ստացված տեղեկութիւնների համեմատ,—գրում է «Вечерн. Вр.» լրագիրը,—շատ վիճելի են դառնում այն հաւատացումները, որ իբր թէ ռուս զօրքերի վրա պարսիկների յարձակման միակ պատճառը այդպէս անուանված կովկասեան փախստականները և հայ յեղափոխականներն են եղել։ Պակաս տարօրինակ չէ և Թիւրքական բաժանարդ մասի ընթացքը Թաւրիզում, բայց սուրի կս տարօրինակ է Թիւրքաց զօրքերի մօտենալը ռուսական սահմաններին։ Մեծ ուշադրութիւն է դարձնում իր վրա երիտասարդ-Թիւրքերի գործելակերպը, որոնք վաղուց երդում են վրէժխնդրութեան մասին Ուրմիայի շրջանում ունեցած անպէսողութիւնների համար»։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Բաշտ, 15 դեկտեմբերի

Դեկտեմբերի 8-ին տեղի ունեցած դէպքից յետոյ, երբ քաղաքն առ այժմ կամ ժամանակաւորապէս անցաւ ռուսաց զօրքի ձեռքը, տեղիս ռուսական հիւպատոս Նեկրասովը մի յայտարարութեամբ՝ պարսկերէն լեզուով ապված՝ ժողովրդին յորդորում է գործի դնել, յայտնելով որ խաղաղ ապրելակերպութեան հետ գործ չունի, այլ մի քանի խանանկիչների։

Այս յայտարարութեանը այստեղի ժողովրդի անունից պատասխանվեց դարձեալ տպված և մեզքը հիւպատոսի վրա գցվեց։ Աւելացված էր նոյն յայտարարութեան մէջ, թէ իրանք ունեն Ամիր-Ալի-շահ, բացի նրանից ուրիշի խօսքով կամ խորհրդով ոչինչ չեն անի և այն, և այն։

Չը նայած որ քանի անգամ Թէհրանից հեռագիր է ստացվել այստեղ, որ գործի կենան և ռուսաց կառավարական հիմնարկութիւնների դէմ ցոյցերի չը դիմեն և ընդհանրապէս զբաղվեն դրութեան վերջ տալ, վերացնելով թէ անտեղի բոյկոտը և թէ խանութի, շուկայ բանալ, բայց և այնպէս այստեղ յաջառում են և շարունակում լարված դրութիւնը։

Գիշերները հրացանաձգութիւնը չէ դադարում, անտեղի կրակով ժողովրդին սարսափի մէջ պահելով։ Որոշ մարդիկ թէ ձերբակալվում են և թէ նոյնպէս որոշ մարդկանց տներ և հիմնարկութիւններ են խուզարկվում։ Ի թիւս այլ հիմնարկութիւնների, խուզարկվեց նաև տեղիս հայոց միակ դպրոցը։

Ինչպէս ասացի, փաստացի կերպով քաղաքիս խաղաղութեան գործը ռուսաց ձեռքին է և մի տեսակ զինուորական դրութեան մէջ է գտնվում։ Զէնքերը հաւաքվում է հասարակութեան ձեռքից։ Ռուսաց պատրուլները գիշեր-ցերեկ փողոցներում շրջում են։ Ծերունի

ԹԻՒՐՔԱՀԱՅՈՑ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՐԴՈՒՄՆ ՈՒ ԱՌԱՋԻՆ ՃԱՌԸ

Դեկտ. 9-ին՝ Թիւրքահայոց նորընտիր պատրիարք Յովհաննէս արքեպ. Արշարունի յատկապէս կազմված պատգամաւորութեան միջոցով հանդիսաւորապէս հրաւիրվել և առաջնորդվել է Կում-Կափուի մայր-եկեղեցին՝ իր պատրիարքական երդումը կատարելու։

Հանդիսաւոր թափորը հասնելով Կում-Կափու, Արշարունի արքեպ. առաջնորդվում է պատրիարքարան, իսկ պատգամաւորութիւնը մտնում է մայր-եկեղեցին, որի բակում, ինչպէս և շրջակայ փողոցներում խռնված է եղել հետաքրքիր բազմաթիւ հասարակութիւն։ Այդտեղ՝ այդ. ժողովի

մայր-դիւանի առենապետ Մանուկ էֆ. Ա-զարեան բացել է ազգ. ժողովի նիստը։ Ապա տէրունական աղօթքից յետոյ կարդացվել է կառավարական պաշտօնական գրութիւնը, որով յայտնվում է վաւերացումը Արշարունի սրբազանի պատրիարքական ընտրութեան։ Դրանից յետոյ յատուկ կազմված մի պատգամաւորութեան միջոցով եկեղեցի է հրաւիրվել նորընտիր պատրիարքը։ Այդտեղ առենապետ Ազարեան էֆ. կարդացել է հետեւեալ ճառը.

«Ամենապատիւ սրբազան հայր,

«Ազգային ժողովս իր զեկտ. 2-ի նիստին մէջ ձեր բարձր սրբազնութիւնը թիւրքահայոց պատրիարքական աթոռը կոչած ըլլալով, մայր դիւանս, յանուն ազգային ժողովոյ, կը փութայ ձեր բարձր սրբազնութեան ընտրութիւնը շնորհաւորել, կարդութիւն մաղթելով յաջողութեամբ կատարելու այդ կարեւոր և բարձր պաշտօնը, զոր հայ ազգին համակրութիւնը կը վստահի և կը յանձնէ ձեր փորձառու ձեռքերուն։ Ազգային ժողովս վստահ է, թէ ձեր բարձր որ բազնութիւնը իր 30-ամեայ պաշտօնավարութեան ասպարէզին մէջ ցոյց տուած անձնուիրութիւնը պիտի շարունակէ ի շահ և յօգուտ եկեղեցւոյ և ազգին, որ այսօր՝ ամէն ժամանակէ աւելի պէտք ունի իր զաւակաց աջակցութեան։

«Բարեբաղդ կը համարիմ դիս հրաւիրելով ձեր բարձր սրբազնութիւն կատարել իր սահմանադրական ուխտը»։

Ապա նորընտիր պատրիարքը եկեղեցւոյ մայր խորանի առաջ ծնկաչոք արտասանել է հետեւեալ ուխտը.

«Առաջի Աստուծոյ և ի ներկայութեան ազգ. ժողովի, հրապարակաւ կուխտեմ հաւատարիմ մնալ սահմ. օսմանեան պետութեան և ազգիս, և ճշմարտապէս հոգել ազգ. սահմանադրութեան անթերի գործադրութեանը»։

Դրանից յետոյ պատրիարքական տեղապահ Վ. արքեպ. Մանկունի հետեւեալ խօսքերն է ուղղել նորընտիր պատրիարքին.

«Սրբազան եղբայր, դուք հովուական գաւազանը ունիք արդէն. կը փութամ ներկայացնել ձեզ պատ. իշխանութեան այս ցուցը՝ անշուք ու պարզ։ Բայց շատ խորհրդաւոր է ու մեծ նշանակութիւն ունի այս ցուցը. անիկա կրնայ փորձ ձեռքերու մէջ՝ Ահարոնի գաւազանին նման ծաղկիլ, վարդեր սփռել՝ անուշ ու հոգի զարթ. ա-նիկա կրնայ Մովսէսի գաւազանը դառնալ, որ աղբիւրներ բացաւ ծարաւած շրթունքներու։ անիկա կրնայ ջահ մը ըլլալ՝ սիրտերն ու միտքերը լուսաւորելու։ Ուրիշներ այս գաւազանին փշալից ըսած են։ Կը ժիտեմ այդ կարծիքը։ Փշալից է այս ցուցը՝ երբ անփորձ ձեռքերու մէջ կը գտնուի, բայց փառաւոր ու արդիւնաւոր կըլլայ՝ երբ փորձ ձեռքերու կը յանձնուի։ Դուք արդէն կատարեալ փորձառութիւն ունիք՝ ձեր վարած տեղապահական ու առաջնորդական պաշտօններով, կրօնական և ազգ. ժողովական անդամակցութեամբ։ Ծանր իշխանութիւն մը կը ստանձնէք. բազում տեսակ գործեր կան, որոնք անվհատ կորով կը պահանջեն. ապաւինեցէք Աստուծոյ, ապա պատ. երեսփ. ժողովին, ազգ. վարչութեան, որոնք պիտի դիւրացնեն ձեր ջանքերը։ Վերդովումներու մէջէն էր ազգին ներքին վիճակը, երբ պաշտօնի կոչուեցայ. բարեբախտ կը համարիմ ինքզինքս՝ յանձնելով ձեզ ազգին վիճակը՝ խաղաղ կերպով։ Կը շնորհաւորեմ ձեզ և պատ. ժողովը և կատարեալ յաջողութիւն կը մաղթեմ»։

Արշարունի արքեպ. պատասխանել է հետեւեալ կերպով.

«Շնորհակալ եմ, սրբազան եղբայր։ Ձեր թուած յատկութիւնները իմ կարողութեան սահմանէն վեր են. բայց կապաւինիմ Աստուծոյ, որուն՝ մարդկային միտքը չէ կրցած թափանցել։ Ան էր որ զօրացուց, արիացուց առաքեալները՝ որ գործեն իրենց անծանօթ երկիրներ։ Ապաւինելով այն Աստուծոյն որպէս Իշխունեաց բուրաստանին անուշահոտ ծաղիկը՝ առ Աստուած աղերսող Գրիգոր Նարեկացի, ըսելով. «Տէր, աչք քո յիս և ես ի դժոխս»։ Շնորհակալ եմ պատուաւոր ժողովին վստահութեան ու համակրութեան համար, որ դիս կոչեց այս պաշտօնին։ Կը հաւատամ որ այս ընտրութիւնը պղատոնական սէրը չէր, այլ համոզումի ու գիտակցութեան արդիւնք։ Պատ. անդամներ ազգ. երեսփ. ժողովի. դուք որ առանց իմ գիտակցութեանս կանչեցիք դիս այս պատրիարքական ծանր պաշտօնին, իմ շնորհակալութիւններս կը յայտնեմ ձեզ առ այս և անուշադ եմ, որ դուք ձեր մխածայն օժանդակութիւնը չվիժի զանաք ինձի և զօրավիգ լինիք ինձ։ Եթէ դուք ձեր օժանդակութիւնովը ու համերաշխ աշխատութիւնով զօրավիգ չլինիք ինձ, այն ատեն, ես՝ ոգէտ, տկարս, հիւանդս ու անկարող՝ կապիկրանամ և անկարող կըլլամ պայքարելու և աշխատելու։ Ես լիայոյս եմ, որ այս ժողովս պիտի օգնէ ու համանուագ և համերաշխ աշխատակցութեամբ պիտի ընկերակցի ինծի։ Տառապեալ ու խորտակեալ ազգին ցաւերը անհուն են, վէրքերը խոր, և ամեն օր կարկուտի նման կը թափին խնդիրները։ Կը խոստանամ դառնալ առիւծ ամենի՝ օտարին առջև ազգային շահերը պաշտպանելու համար, և ազգիս առջև՝ աղու աղաւնի։ Կաղաչեմ որ մեր վիճաբանութիւնները չմղեն մեզի՝ մինչև եսականութեան, վիճինք, կարծիքներ փոխանակենք, յարգենք իրարու գաղափարը և սկզբունքը, բայց չյուզենք եղբայրատեաց պայքարներ։ Այս ընթացքով կը սոսկամ որ կորստեան վիհը կը գահավիժինք։ Անցեալը մէկ կողմ թողով, զօրավիգ ըլլանք իրարու, և օտարն ալ տեսնէ թէ մէկ ենք, մէկ սիրտ։

«Շատ անգամ հայ-հոմէականաց, յունաց և օտարներու հետ շփման մէջ կը գրանուիմ. անոնք կայպանեն մեզ, կը մեղադրեն մեզի մեր այն ցաւալի ունակութեան համար, թէ միշտ անհամաձայնութիւն, պառակտում կը տիրէ մեր մէջ։ Երբ գործարանէ մը ներս կը մտնէք, նախ կը տեսնէք բանուորներն որ եռանդով ու ժիր կաշխատին, յետոյ մեքենաները, վերջէն անոնց մանրամասնութիւններն և ապա շոգիի կաթսան, որ գործունէութեան մէջ կը դնէ բոլոր մեքենական կազմածները։ Այս շոգին, մեր բոլոր վէճերուն այս առանցքը, նպատակը պէտք է ըլլայ միայն ազգին օգուտը։ Աստուած շնորհէ ձեզի հոգի իմաստութեան, ոգի պահպանութեան և զօրացնէ ձեզի ինչպէս երբեմն պարզ ու տգէտ ձկնորսներէն ազատութեան մեծամարտիկներ յարոյց։ Ես փիլիսոփայական հմտութիւն չունիմ, ընդհանրական, բնաւորական ուսում չունիմ. ունիմ միայն բարեսրտութիւն, անկեղծութիւն և մէկուն միւսին քմայքին չեմ հպատակիր»։

Ապա նորընտիր պատրիարքն առաջնորդվել է նախագահական աթոռը, և երեսփոխանները մօտենալով սրբազանին՝ իրենց շնորհակալութիւններն են յայտնել։ Եղիշէ արքեպ. Իւրեան և Արշարունի սրբ. ողջագուրվել են։

Ի վերջոյ՝ Արշարունի սրբազան, պատասխանելով պատրիարքարանի պաշտօնէութեան կողմից իրան ներկայացող Թէլեան և Խաչատուրեան էֆէնդիների շնորհաւորանքներին, մի ճառ է խօսել՝ տխուր մի ակնարկ նետելով ազգի վիճակի վրա։ Նորընտիր պատրիարքն ապա յորդորել է պատրիարքարանի պաշտօնէութիւնը սիրով և միաբանութեամբ վարվել իրար հետ, աղդարարելով որ ինտրիգները չը լարեն իրար դէմ։ «Դեռ շիկագոյն էին, դեռ ապիտակ թել մը չկար,—յարել է Արշարունի սրբ. ցոյց տալով իր ապիտակած միրուքը,—երբ այստեղ ներսէս պատրիարքի օրով վիճակաբրութիւններն և այլ վաւերաթուղթեր ֆրանսերէնի կը թարգմանէի, իմ կարողութեանս չափով։ Ես այս հաստատութեանս ամենէն վաղեմի աշխատաւորներէն մին եղած եմ, ուստնմասիրած եմ այս տունը։ Կը փափաքիմ, որ բոլոր պաշտօնէութիւնն եղբայրաբար վարուի այստեղ, յապաղումներ, զանազութիւններ չպատահին»։ Յետոյ ակնարկելով իրան դէմ եղած մի շարք վիրաւորիչ ու նախատական յարձակումներին, ասել է, թէ իրան վարկաբեկելու, յուսահատեցնելու այս ճիգերը ներողամտութեամբ է դիտում։

«Բիւզանդիոնը» Դուրեան և Արշարունի արքեպիսկոպոսների այդ օրվայ ողջագուրման առիթով ի միջի այլոց գրում է հետեւեալ տողերը։

«Վաղը հայրապետական ընտրութիւն կը կատարուի, և երկուսն ցանկը խիստ հաւանաբար պիտի կազմուի Դուրեան և Սուրէնեանց սրբազաններէն։ Արշարունի և Դուրեան սրբազանները հոգելոյս Իզմիրլեանի ձեռնասունները են, միասին վարդապետական աստիճան ստացած և իրենց պատուական հոգեւոր հօր համակրանքին արժանացած։ Երեսփոխաններն ակնարկելով այն շատ գեղեցիկ զուգադիպութեան, որ տէր-Եղիշէ արքեպիսկոպոսի ընտրութիւնը պիտի ընծայէ, Արշարունի սրբբազանի պաշտօնը շնորհաւորելու առթիւ կը կանխէին նաև խնդակցելու Դուրեան սրբազանի...։ Եւ այն ատեն, այս երկու արժանաւոր եկեղեցականներն, որ բախտին մէկ դառն խաղով ակամայ դէմ դէմի եկած էին պատրիարքական ասպարէզին վրայ, ձեռք-ձեռքի տուած պիտի վարեն ազգը, ինչպէս այս իրձը կը տածէին երեսփոխանները»։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Զարայի եղանակներ

Նոր-Բայազէտ, 13 դեկտեմբերի

Այս տարվայ չորային եղանակները մի տեսակ տարօրինակ ապաւորութիւն են թողնում մեր ժողովրդի վրա։ Մի կողմից անձրեւները դադարեցին աւելի քան 4 ամսից ի վեր, մի հանգամանք, որը մեզանում մի արտասովոր երեւոյթ է. միւս կողմից չը նայելով որ արդէն դեկտեմբեր ամիսն է, երբ ամեն տարի այս միջոցին խոր ձիւնով էր ծածկված լինում մեր գաւառը, այժմ, այնուամենայնիւ, դեռեւս ոչ միայն ձիւն չը կայ մեզանում, այլ և փոշու ամպերը մարդու խեղդում են փողոցներում։ Օրերը գրեթէ տաք, արեւ, օդը պարզ, երկինքը անամպ, կապուտակ, այնպէս որ դեռ բազմաթիւ անասուններ, մանաւանդ ոչխարների հօտեր արածում են դաշտերում։

Եղանակների այս տարօրինակութիւնը սակաւ մտատանջութեան մէջ չէ գցել հողագործ տարբին. շատերը կասկածում են, որ անձրեւն ծմեռը մի վատ նշան է առաջիկայ գարնանը բոյսերի աճեցողութեան վերաբերմամբ, մանաւանդ աշնանացանքերի նկատմամբ։ Թէպէտ մենք շատ աշնանացանքեր չունենք առհասարակ (բացի մի երկու գիւղերից, ուր ցանում են տարեկան), բայց շատերի կարծիքով հողը ընդհանրապէս չի պարարտանայ, չի յղանայ, հետեւապէս հողագործութեան արդիւնքը սակաւ կը լինի առաջիկայ տարի։ Միւս կողմից՝ այդ կարծիքը ցրելու համար շատերը յոյս են յայտնում, որ գարնան անձրեւները եթէ շաբաթվվին ժամանակին տեղալ պարբերաբար, ոչ մի կասկած չի մնայ հողագործական արդիւնաբերութեան առատութեան նկատմամբ, ի նկատի առնելով այն հանգամանքը, որ այժմեան չորութիւնը ոչ մի զօրեղ ազդեցութիւն չէ կարող անել առաջիկայ տարվայ բերքի վրա։

Յամենայն դէպս ձիւնոտ ձմեռը, մեր գիւղականների կարծիքով, մի լաւ նշան է առաջիկայ տարվայ արդիւնքի վերաբերմամբ։ Սակայն՝ հակառակ կարծիքի՝ դեռեւս մեզանում ձիւն չը կայ։ Այսպէս թէ այնպէս՝ ցանկալի է, որ մեր հողագործ ժողովրդի այլայլված տրամադրութիւնը խաղաղ անցնի և անձիւն ձմեռը նրան չի վախեցնի, յոյս դնելով այն բնական-կլիմայական փոփոխութիւնների վրա, որ չորային երկարաւոր եղանակներին կը յաջողեն անշուշտ անձայնի և խոնաւ եղանակներ, որոնք ընդունակ ըլլալու մեր խեղճ ու կրակ հողագործութեան ցանքերը և աճեցնելու նրա բուսականութիւնը։

Գ. Սինանեան

—

Ա. ԵՄՄԻԶ ԶՈՒ

Խանքենդ, 12 դեկտեմբերի

Ամսիս 10-ին, երեկոյեան ժամը 6-ին, սարճանակի երկու հարուածով սպանվեց իր խոհարարի ձեռքով Խժեներ Լ. Տէր-Եղիազարեանի կինը։ Սպանութիւնը պատահում է հետեւեալ հանգամանքներում։

Մօտ 8 ամիս յիշեալ խոհարար Ալէքսանդրը ծառայելիս է լինում Տէր-Եղիազարեանի տանը։ Դէպքից մի քանի օր առաջ ինչ-ինչ պատճառներով Ալէքսանդրին արձակում են ծառայութիւնից։ Վերջինս, արձակվելուց յետոյ, գնում է Նուշիս։ Ապա չարաբաստիկ երեկոյեան վերադառնալով այստեղ՝ մտնում է Տէր-Եղիազարեանի տունը, որտեղ լինում է վերջինս կինը, ու խօսքերը սրան ուղղելով ասում.

— Ես ինչով եմ մեղաւոր, որ ինձ արձակել էք. այժմ մի վկայական տուէք՝ ձեզ մօտ լաւ ծառայելու համար, որ նրանով կարողանամ մի ուրիշի մօտ մտնել ծառայելու։

Տիկինը պատասխանում է, որ այդ՝ ազայի գործն է. և դեռ խօսքը բերանին, Ալէքսանդրը հանում է սարճանակը և խոկոյն կրակում։ Գնդակներից մէկը դիպչում է կոզքին, իսկ միւսը թիւն, որից յետոյ անմեղ զոհը մինչև առաւօտ կիսակենդան մընալով՝ մեռնում է։

Զարագործը, տեսնելով իր թափած անմեղ արիւնը, փորձում է ինքնասպանութիւն գործել, բայց չաջողվելուց յետոյ՝ փախուստի է դիմում։ Տնեցիների ձայնին դուրս է դալիս սպանվածի տաքրը և ուղում է փախչողին բռնել։ բայց տեսնելով որ չարագործը սարճանակը ձեռքին մահ է սպառնում՝ իրան բռնողին, թողնում է և անճարացած հարայ տալիս։

Դէպքի տեղն է գալիս պրիստաւը և միջոցներ ձեռք առնում չարագործը բռնելու համար։

Միւս օրը չարագործը երեւում է Խանքենդի մօտերը, որին ձերբակալում են և պատշաճաւոր քննութեան ենթարկելուց յետոյ ուղարկում են բանտ։

Լուրը տարածվելով հասարակութեան մէջ՝ ամենքի վրա ցնցող տպաւորութիւն թողեց։

Մի քանի ամիս առաջ՝ Ներսէս Իւզբաշեանի եղեռնական մահից յետոյ՝ այս երկրորդ դժբաղդ դէպքն է Խանքենդում։

Դիտող

—

Զուրպակաս մի գիւղ

Ալիբէկլու գ. (Էջմիած. գ.), 30 նոյեմբ.

Մեր գիւղը բաղկացած է մօտաւորապէս 150 ընակիչներից, որոնց մէջ չը կայ այնպիսին, որը նիւթականապէս ապահով լինի. Էջմիածնի գիւղերի մէջ կարելի է համարել ամենաաղքատը։ Այո, աղքատ են, բայց ինչն է պատճառը... Պատճառը խիստ լուրջ է և դժուար իրագործելի։ Այստեղ սաստիկ ջրի պակասութիւն է զգացվում։ Ինքը տողերիս գրողը եղել է ականատես, որ սրանց այգիները երբեմն ամիսներով անջրդի մնալով, տուած արդիւնքը լինում է շատ չնչին, որով հազիւ կարողանում են իրանց գոյութիւնը պաշտպանել։ ճիշդ է, թէև շատ վայրերում էլ ջրի պակասութիւն կայ, բայց այստեղի ջրի պակասութիւնը անչափ շատ է, որ ամառը այգիները ջրելու ժամանակ ծագում են խռովութիւններ և անկարգութիւններ։

Այս գիւղը չը նայած իր նիւթական սուղ միջոցներին՝ ունի մի գեղեցիկ պետական դպրոց, հանդերձ 50 սաներով։

Թ. Տէր-Միքայէլեանց

—

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Դեկտեմբերի 12-ին Վլադիկավկազում սկսեց քննվել Քութայիսից փոխադրած սէնսացիոն մի գործ, որը վերաբերում է Սվանէթիայի իշխան Ալէքսանդր Տնդիզովիչ Դադէշկէլիանիի սպանութեան խնդրին, որը կազմակերպելու գործի մէջ մեղադրվում են ութ մարդ, որոնց թւում նաև Դաւիթ Կոնստանտինովիչ Դադիանին և սպանվածի կին Վարվառա Գիւորգիեվնա Դադէշկէլիանին։

Սպանութեան մէջ մեղադրվող իշխան Դաւիթը Գուրիայի հին արքայական ցեղի վերջին ժառանգն է։ Նա իր կրթութիւնը ստացել է Պետերբուրգում և ընդունված է եղել արիստոկրատիկ բարձր շրջանակներում։ Իշխան Դադէշկէլիանին Սվանէթիայի աւատական իշխաններից է։ Սրանց և Դադիանների ցեղերի միջև դարերից ի վեր գոյութիւն է ունեցել անհաշտ թշնամութիւն, որի շնորհիւ անթիւ անգամներ արիւն է թափվել։

Մեղադրական ակտից երևում է, որ իշխան Դ. Դադիանին, նախքան իշխան Ա. Դադէշկէլիանիի սպանութիւնը շատ տարիներ առաջ սիրային յարաբերութիւնների մէջ է եղել իշխ. Դադէշկէլիանիի կնոջ՝ Վարվառայի հետ (ծնված իշխանաղանուհի Երիսթավի)։

Որպէսզի իր սիրային յարաբերութիւնը կարողանայ ծածկել ամուսնուց, իշխանուհի Դադէշկէլիանին Օզուրգէթից Քութայիս տեղափոխվեց, պատրուակ բռնելով որ իր երեխաները Քութայիսումն են ուսանում, ուր անարգել տեսնվում էր իշխան Դադիանի հետ։

Չը նայած որ իշխան Դադէշկէլիանին քանիցս ուզեց իր կնոջը Քութայիսից հեռացնել, բայց վերջինս դանդաղ պատճառներով խուսափում էր։

Սրանից յետոյ իշխ. Դադիանին սկսեց լուր տարածել, թէ իբր իշխ. Դադէշկէլիանին մարդիկ է պրում՝ որպէսզի իրան սպանել տայ։

Դրանից յետոյ իշխանուհի Դադէշկէլիանին, իր հիւանդութիւնը պատճառ բռնելով, չուզեց իր ամուսնու հետ Օզուրգէթ գնալ, այլ մնաց հիւանդանոց, ուր նրան այցելում էր իշխ. Դադիանին։

Լսելով այս մասին, իշխան Դադէշկէլիանին 1910 թւի յունվարի 8-ին Քութայիս եկաւ և կնոջը այցելութիւն տալով հիւանդանոցում յայտնեց նրան, որ տանելու է Օզուրգէթ։ Դուրս գալով հիւանդանոցից՝ 50—60 քայլ անցնելուց յետոյ գնդակահար եղաւ։ Երբ սպանութեան կազմակերպիչները բանտարկվեցին, քննութիւնը պարզեց, որ իշխանուհի Դադէշկէլիանին կեղծել է հիւանդ ձևանալով, որպէսզի դրա շնորհիւ կարելի լինէր կանխօրէն պատրաստած սպանութիւնը գլուխ բերել։

Իշխան Դադիանին և իշխանուհի Դադէշկէլիանին իրանց մեղաւոր չեն ճանաչում և վճռականապէս ժխտում են իրանց միջև եղած սիրային յարաբերութիւնը։ Իշխան Դադիանին պաշտպանում էր Վլադիկավկազի անուանի փաստաբան իշխան Միքելաձէն։

Դատապարտված են բոլոր իրաւունքներից զրկվելով տաժանակիր աշխատանքների իշխ. Դադիանին 20 տարով, Բաբախաձէ և Ալշիբայան՝ 12 տարով և Կախիձէ՝ 10 տարով, Բակուրիան՝ 1 տարով բանտարկութեան։ Դատավճիռը ներկայացվելու է Թագաւոր Կայսրի բարեհայեցողութեան։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Այսօր, չորեքշաբթի, Կովկասի Փոխարքայի Դիւանական Խորհրդի դահլիճում տեղի կունենայ Կայսերական Ռուսական Աշխարհագրական Ընկերութեան Կովկասեան ճիւղի հրապարակային նիստը, նախագահութեամբ սենատոր Է. Ա. Վատացիի։ Նիստի ժամանակ Ա. Մ. Դիրը կը կարդայ իր զեկուցումը Թագաւորեան և Քուրթաթինեան Օսէթիայում կատարած ճամբորդութեան մասին։ Զեկուցման մէջ մտնում են այդ շրջանում կատարված մարդաբանական և հնագիտական ուսումնասիրութիւնները։ Ա. Դիրը կը պատմէ նաև այդ վայրերի հին գերեզմանների, սրբարանների և օտարի հին դիցարանութեան մասին։ Զեկուցման ընթացքում մոգական լապտերի միջոցով ցոյց կը տրվին նկարներ և տեսարաններ, այլև խօսող մեքենայի շնորհիւ ներկաներին կը ծանօթացնէ օտական երգերի հետ։ Զեկուցման սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին։

◆ Երկու օր առաջ քաղաքագլուխ Ա. Խատիսեան ստացել է Պետական Դումայի անդամ Աշէմեանից մի հեռագիր, որով հաղորդվում է, որ Թիֆլիսում համալսարան բանալու հարցը մինիստրական խորհրդում կը քննվի կամ դեկտ. 29-ին և կամ յունվարի սկզբում։

◆ Երէկ, երեքշաբթի, դեկտեմբ. 20-ին, բացվեց կովկասեան մեղուապահական ընկերութեան կազմակերպած տօնավաճառը Կայսերական Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան շինութեան մէջ։ Տօնավաճառի ժամանակ, որը պէտք է տևէ մինչև յունվարի 1-ը, կը ծախվեն մատչելի գներով զանազան տեսակ և զանազան տեղերի մեղրեր, ինչպէս մեղրահացով, այնպէս էլ ծոր մեղր։ Մեղուապահական ընկերութիւնը, կամենալով անմիջական յարաբերութիւն ստեղծել մեր երկրի մեղուապահների և սպառողների մէջ, նշանակել է ամենալաւ մեղրի փոքրիկ գինը 22½ կոպէկ, որից աւելի ոչ մի մեղուապահ իրաւունք չունի վաճառելու։ Սպառող հասարակութեանը մնում է իր վերաբերմունքով քաջալերել մեղուապահական ընկերութեան այս ձեռնարկը, մանաւանդ որ բազմաթիւ միջնորդներ, որոնք զբաղված են մեղրի առևտրով ի վնաս մեղուապահների և սպառողների, աշխատում են արգելքներ յարուցանել՝ ուծնավաճառի աջողութիւնը նուազեցնելու համար։

◆ Իշխանութեան թոյլտուութեամբ Պետական Դումայի պատգամաւոր Բօրիսէվը Թիֆլիսում դասախօսութիւններ կը կարդայ դեկտ. 22-ին և 23-ին։

◆ Եղբ. Զուբալովների ծախքով կառուցվող մանկական հիւանդանոցը կաւարտվի առաջիկայ տարվայ նոյեմբերին։ Ի նկատի ունենալով այս հանգամանքը, քաղաքային վարչութիւնը առաջիկայ տարվայ իր նախահաշիվի մէջ մացրել է 7,500 բուբ. ծախք նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար։ Հիւանդանոցի շտատի նկատմամբ վարչութիւնը քաղաքային Դումային կը ներկայացնէ իր զեկուցումը։

◆ Թիֆլիսի ընտրողական 5-րդ մասի ընտրող Տ. Տէր-Ղեւոնդեանը Թիֆլիսի նահանգապետին ներկայացրեց մի բողոք յիշեալ քաղաքամասում լրացուցիչ ընտրութիւնների ժամանակ կատարված զեղծումների նկատմամբ։

◆ Կովկասի զինուորական շրջանի խորհուրդը յայտարարում է ի գիտութիւն պաշտօնաթող բոլոր զինուորականների և նրանց ընտանիքների՝ առանց խորութեան ստիճանի, որ արտակարգ գումարների նոր բաժանումների շնորհիւ նիւթական օժանդակութեան բաշխումը 1912 թ. յունվարի 1-ից վերացվում է, հետևաբար և նոր ստացվող խնդիրները կը մնան անպատասխան։

◆ Գ. Վարդանեան ներկայացրեց 1000 բուբլի վրաց աղնուականութեան գիմնազիայի չքաւոր աշակերտներին խնամակալ կոմիտէին այն պայմանով, որպէսզի այդ գումարը իբրև մշտական գումար մնայ ուրեք բանկում, իսկ նրա տոկոսիքով թոշակ տրվի գիմնազիայի չքաւոր սաներից մէկին, համաձայն ցանկութեան հանգուցեալ Վարդանեանի։

◆ Ա. Փուղինեան Խարբերդի քաղաքային դրադարանին նուիրել է մի քանի գրքեր։

◆ Թիֆլիսի կառապանները խնդրում են քաղ. վարչութիւնից, որպէսզի վերջինս թոյլ տայ կառքերի համարները վերցնել փետրվարի 1-ին, փոխանակ յունվարի 1-ին վերցնելու։ Այսօրինակ յետաձգումը նրանք պատճառաբանում են կենդանիների կերակրի թանգութեան և նրանց գործերի անկման պատճառով, որի շնորհիւ չեն կարող մինչ Նոր-Տարին ձեռք բերել համարներ կապքերի համար։

◆ Երէկ, Ի. Կրօնշտադտկիի մահվան տարելիցի օրը Թիֆլիսի ռուսաց դպրոցներում կատարվեց հոգեհանդիսան կարդ, որից յետոյ սաները արձակվեցին Ծննդեան տօների առիթով։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը որոշել է 600 բուբլի յատկացնել Կովկասի քաղաքների ներկայացուցիչների առաջին համագումարի արձանագրութիւններն ու որոշումները հրատարակելու համար։

◆ Դեկտ. 19-ին Թիֆլիսի մահմեդականների զերեզմանատանը կատարվեց «Շախսէյ Վախսէյ» կոչված մահմեդականների կրօնական արարողութիւնը։

◆ Կիրակի, դեկտ. 18-ին Ժողովրդական Տանը կայացաւ «Ապագայ-Մօմավարի-Բուդուշնօստ» կօօպերատիվ-սպառողական ընկերութեան անդամների տարեկան ընդհանուր ժողովի շարունակութիւնը, երբ ի միջի այլոց որոշվեց Նախալովկայում բանալ ոչ ուշ քան մինչև փետրվ. 1-ը բակալէյնի խանութ։ Ապա կատարվեցին վարչութեան անդամներից մի քանիսի տեղ նոր ընտրութիւններ։ Ընտրվեց նմանապէս վերատուչ յանձնաժողով։

◆ Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկերութեան Բօրժոմի ճիւղի վարչութեան անդամներից մէկը նոյն ընկերութեան գլխաւոր վարչութեան ներկայացրել է մի յայտարարութիւն, որով առաջարկում է հիմնել շարժական գրադարան-ընթերցարան, ի նկատի առնելով, որ ազգաբնակութեան լայն խաւերում հետզհետէ մեծանում է ընթերցանութեան պահանջը։

◆ Երևանցի այրի Եղիսաբէթ Աբրահամը իր հիւանդ աղջկայ հետ գտնվում է Թշուառ վիճակի մէջ և օգնութիւն է խնդրում բարի մարդկանցից։ Կինը ապրում է Ծօմինայա փող., տ. Զաշտօվի № 18։

◆ Քօլագիրանից (Լօռու գաւառամասում) գրում են «Գիւղատնտես» թերթին, որ երկու ամսվայ ընթացքում՝ սեպտեմբերին և հոկտեմբերին՝ երեք դրացի, այն է Դսեղ, Ղաչաղան և Զորագիւղ գիւղերում եղել են մեղրի գողութեան եօթն դէպքեր, որով փչացրել են մօտաւորապէս մեղուների 70 ընտանիք։ Գողերը յայտնվել են, բայց մնացել են անպատիժ։

◆ Այսօր Բաստօվում Դ./վ., «Пр. Край» թերթի խմբագրութեան նախաձեռնութեամբ լինելու է համերգ-ներկայացում, որի ամբողջ հասոյթը գնալու է յօգուտ ռուս սովեալների։ Ցիշեալ թերթի այդ քայլը արժանի է ամեն գովասանքի։

◆ Բաղուի նաւթարդիւնաբերողների համագումարը վաւերացրեց նախորդ համագումարի այն որոշումը, որով 17,000 բուբլի է յատկացվում Կովկասեան պոլիտեխնիկումին և նոյնիսկ այն դէպքում, եթէ նկատմամբ։ Թէպէտ մենք շատ աշնանացանքեր չունենք առհասարակ (բացի մի երկու գիւղերից, ուր ցանում են տարեկան), բայց շատերի կարծիքով հողը ընդհանրապէս չի պարարտանայ, չի յղանայ, հետեւապէս հողագործութեան արդիւնքը սակաւ կը լինի առաջիկայ տարի։ Միւս կողմից՝ այդ կարծիքը ցրելու համար շատերը յոյս են յայտնում, որ գարնան անձրեւները եթէ շաբաթվվին ժամանակին տեղալ պարբերաբար, ոչ մի կասկած չի մնայ հողագործական արդիւնաբերութեան առատութեան նկատմամբ, ի նկատի առնելով այն հանգամանքը, որ այժմեան չորութիւնը ոչ մի զօրեղ ազդեցութիւն չէ կարող անել առաջիկայ տարվայ բերքի վրա։

Յամենայն դէպս ձիւնոտ ձմեռը, մեր գիւղականների կարծիքով, մի լաւ նշան է առաջիկայ տարվայ արդիւնքի վերաբերմամբ։ Սակայն՝ հակառակ կարծիքի՝ դեռեւս մեզանում ձիւն չը կայ։ Այսպէս թէ այնպէս՝ ցանկալի է, որ մեր հողագործ ժողովրդի այլայլված տրամադրութիւնը խաղաղ անցնի և անձիւն ձմեռը նրան չի վախեցնի, յոյս դնելով այն բնական-կլիմայական փոփոխութիւնների վրա, որ չորային երկարաւոր եղանակներին կը յաջողեն անշուշտ անձայնի և խոնաւ եղանակներ, որոնք ընդունակ ըլլալու մեր խեղճ ու կրակ հողագործութեան ցանքերը և աճեցնելու նրա բուսականութիւնը։

Գ. Սինանեան

—

Ա. ԵՄՄԻԶ ԶՈՒ

Խանքենդ, 12 դեկտեմբերի

Ամսիս 10-ին, երեկոյեան ժամը 6-ին, սարճանակի երկու հարուածով սպանվեց իր խոհարարի ձեռքով Խժեներ Լ. Տէր-Եղիազարեանի կինը։ Սպանութիւնը պատահում է հետեւեալ հանգամանքներում։

Մօտ 8 ամիս յիշեալ խոհարար Ալէքսանդրը ծառայելիս է լինում Տէր-Եղիազարեանի տանը։ Դէպքից մի քանի օր առաջ ինչ-ինչ պատճառներով Ալէքսանդրին արձակում են ծառայութիւնից։ Վերջինս, արձակվելուց յետոյ, գնում է Նուշիս։ Ապա չարաբաստիկ երեկոյեան վերադառնալով այստեղ՝ մտնում է Տէր-Եղիազարեանի տունը, որտեղ լինում է վերջինս կինը, ու խօսքերը սրան ուղղելով ասում.

— Ես ինչով եմ մեղաւոր, որ ինձ արձակել էք. այժմ մի վկայական տուէք՝ ձեզ մօտ լաւ ծառայելու համար, որ նրանով կարողանամ մի ուրիշի մօտ մտնել ծառայելու։

Տիկինը պատասխանում է, որ այդ՝ ազայի գործն է. և դեռ խօսքը բերանին, Ալէքսանդրը հանում է սարճանակը և խոկոյն կրակում։ Գնդակներից մէկը դիպչում է կոզքին, իսկ միւսը թիւն, որից յետոյ անմեղ զոհը մինչև առաւօտ կիսակենդան մընալով՝ մեռնում է։

Զարագործը, տեսնելով իր թափած անմեղ արիւնը, փորձում է ինքնասպանութիւն գործել, բայց չաջողվելուց յետոյ՝ փախուստի է դիմում։ Տնեցիների ձայնին դուրս է դալիս սպանվածի տաքրը և ուղում է փախչողին բռնել։ բայց տեսնելով որ չարագործը սարճանակը ձեռքին մահ է սպառնում՝ իրան բռնողին, թողնում է և անճարացած հարայ տալիս։

Դէպքի տեղն է գալիս պրիստաւը և միջոցներ ձեռք առնում չարագործը բռնելու համար։

Միւս օրը չարագործը երեւում է Խանքենդի մօտերը, որին ձերբակալում են և պատշաճաւոր քննութեան ենթարկելուց յետոյ ուղարկում են բանտ։

Լուրը տարածվելով հասարակութեան մէջ՝ ամենքի վրա ցնցող տպաւորութիւն թողեց։

Մի քանի ամիս առաջ՝ Ներսէս Իւզբաշեանի եղեռնական մահից յետոյ՝ այս երկրորդ դժբաղդ դէպքն է Խանքենդում։

Դիտող

—

Զուրպակաս մի գիւղ

Ալիբէկլու գ. (Էջմիած. գ.), 30 նոյեմբ.

Մեր գիւղը բաղկացած է մօտաւորապէս 150 ընակիչներից, որոնց մէջ չը կայ այնպիսին, որը նիւթականապէս ապահով լինի. Էջմիածնի գիւղերի մէջ կարելի է համարել ամենաաղքատը։ Այո, աղքատ են, բայց ինչն է պատճառը... Պատճառը խիստ լուրջ է և դժուար իրագործելի։ Այստեղ սաստիկ ջրի պակասութիւն է զգացվում։ Ինքը տողերիս գրողը եղել է ականատես, որ սրանց այգիները երբեմն ամիսներով անջրդի մնալով, տուած արդիւնքը լինում է շատ չնչին, որով հազիւ կարողանում են իրանց գոյութիւնը պաշտպանել։ ճիշդ է, թէև շատ վայրերում էլ ջրի պակասութիւն կայ, բայց այստեղի ջրի պակասութիւնը անչափ շատ է, որ ամառը այգիները ջրելու ժամանակ ծագում են խռովութիւններ և անկարգութիւններ։

Այս գիւղը չը նայած իր նիւթական սուղ միջոցներին՝ ունի մի գեղեցիկ պետական դպրոց, հանդեր

Թիֆլիսում պոլիտեխնիկումի փոխարէն հատկապես բացվելու լինի։

✦ *Վրիպակ.*— «Մշակի» երէկվայ (№ 280) համարին կցված կէս-թերթի «Բանասիրականի» բաժնում սպրդել է մի սխալ։ Բանասիրականի երրորդ սիւնակի երրորդ տողում (սկզբից) տպված է՝ Ստ. Ղօնդախսազեան, պիտի լինի Արշակ Ղօնդախսազեան։

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԹԵՐԹԵՐԻՑ

✦ *Միջքաղաքեան հեռախօսային հաղորդակցութիւն.*—Ներկայումս աւարտվել է հիմնումը միջքաղաքեան հեռախօսային գծի՝ Մօսկվայի ու Խարկովի միջև, որոնց խօսակցական կէտերը լինելու են՝ Տուլայում, Օրեոլում ու Կուրսկում. այլ և Թիֆլիսի և Բագուի միջև, որոնց խօսակցական կէտը լինելու է Գանձակում։

✦ *Երգիչ Շալեապինի մասին.*—Կայսերական թատրոնների վարչութիւնը հինգ տարով պայմանաւորվել է Ֆ. Շալեապինի հետ։ Վերջինը երգելու է 12 աբօնեմէնտային ներկայացումներին, որոնց համար ստանալու է 34,000 ռուբլի, իւրաքանչիւր երգը՝ 1,500 ռուբլով, և 8 երգ՝ արտաքոյ աբօնեմէնտի՝ իւրաքանչիւրը 2,000 ռ.։ Բացի այս 20 անգամ դուրս գալուց, իւրաքանչիւր բեմ դուրս գալու համար էլ ստանալու է 2,000 ռ.։ Իսկ իր ըէժիսէօրական աշխատանքի համար՝ իւրաքանչիւր օպերայից ստանալու է 3,000 ռ.։

✦ *Նոր միջոց քաղցկեղի* (ракъ) *դէմ.*—Բերլինի գիտնականների շրջանում մեծ տպաւորութիւն է արել բժշկական հասարակութեան միջև պրոֆ. Վասէրմանի զեկուցումը՝ կենդանիների քաղցկեղը բուժելու համար արած իր գիւտի մասին։ Մկների վրա նրա արած փորձը տուել է շատ լաւ հետևանքներ։ Իր գիւտը արել է նա, գնալով բժշկապետ Երլիխի հետքերով։ Պրոֆ. Վասէրմանը դեռ չէ թոյլ տալիս՝ փորձեր անել մարդու վրա։

✦ *Փոն Դիդհօվ եպիսկոպոսի կտակը.*—Մօտ օրերս Մօսկվայում վախճանված աւետարանական-լուտերականների ազգապետը՝ Փոն Դիդհօվ եպիսկոպոսը շնորհակալութիւն է անում մօսկվացիներին այն համակրութեան համար, որով նրանք վերաբերվում էին իրան։

«Շնորհակալ եմ մօսկվացիներին՝ ինձ ցոյց տուած այն համակրութեան, սիրոյ և հաւատարմութեան համար, որ ցոյց են տուել ինձ։ Նրանցից, ում որ ես խօսքով կամ գործով վիրաւորել եմ, խնդրում եմ ներել ինձ. ինձ վիրաւորողներին ներում եմ բոլոր հոգով։ Իմ ծիսերս ու ընտանիքս յանձնում եմ Աստուծու ողորմութեանը։ Այն բոլոր հիմնարկութիւններին, որոնց ես մասնակցել եմ, ցանկանում եմ Աստուծու օրհնութիւնը և առաջադիմութիւն։ Իմ մարմինը, իբրև երկրաւոր բան, կտակում եմ հողին մինչև այն ուրախ օրը, երբ յարութիւն կառնեմ Յիսուսով, իսկ հոգիս յանձնում եմ Փրկչիս, ասելով՝ «ընդունի՛ր քո ծառային խաղաղութեամբ»։

Է. ք. Ն.

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 14 դեկտ.

«Մշակի» այսօրվայ համարում (№ 275) կարապետ սրբազանը իր «Մի կարևոր ձեռագիր» յօդուածում, խօսելով Դարաշամբի ս. Նախավկայի մի ձեռագրի մասին, գրում է.

«Նախկին մի ցուցակագրող (Սմբ. Տէր-Աւետիքեան ?) այդ ձեռագրի վրա նշանակել է 210 համարը և անուանել «քարոզք և վարդապետութիւնք». բայց իրօք նա ներկայացնում է Կոմիտաս կաթողիկոսի օրով «յուղղափառ և սուրբ հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց քաղուած...»։

Ինչպէս երևում է վերոյիշեալ հատուածից, սրբազանը կասկածում է, որ Նախավկայի այդ ձեռագրին սխալ վերնագիր տալը կարող է իմ գործը լինել, քանի որ տարիներ առաջ ես եմ կազմել այդ վանքի ձեռագրերի ցուցակը։

Կարապետ սրբազանի կասկածը փարատելու և ինձ վերագրած սխալը հերքելու համար յայտնում եմ, որ երբ 1904 թ. ցուցակագրում էի Նախավկայի ձեռագրերը, ես ես ուշադրութիւն դարձրի այդ գրչագրի վրա, որովհետև նա վանքում մնացած հնագոյն և ուշադրութեան արժանի գրաւոր յիշատակարաններից մէկն էր։ Իմ կազմած ցուցակում թէ այդ և թէ մնացած միւս ձեռագրերը ունեն իրանց բովանդակութեանը համապատասխան վերնագիր։ Վերոյիշեալ ձեռագրի թէ 210 համարը (ես վանքում գտայ միայն 125 կոտոր գրչագիր) և թէ հին սխալ վերնագիրը նշանակել էր ինձանից առաջ ցուցակագրողը, որը իմ կարծիքով պէտք է լինի հանգուցեալ Մեսրոպ եպ. Սմբատեանը, ինչպէս կարելի է եզրակացնել ձեռագրերի վրա նրա իրան յատուկ գրով թողած մակագրութիւններից։

Թէ Կարապետ սրբազանի մատնանիշ արած «կարևոր ձեռագրի» և թէ առհասարակ վանքի միւս գրչագրերի գրական արժէքի մասին ես արդէն մանրամասն յիշել եմ 1910 թւի մարտի 6-ին Մօսկվայի Կայս. Հնագիտական Ընկերութեան Կովկասի ճիւղում կարդացած իմ զեկուցագրում։ (Տես «Кавказъ» № 54, 1910 թ.)։

Սմբատ Տէր-Աւետիսեան

—

Թիֆլիս, 14 դեկտ.

«Մշակի» № 254-ում (նոյեմբեր 17-ի №) ներքին լուրերի բաժնում դերձակ Շերեմետիեվի մօտ կատարված «գողութեան» մասին տպված տեղեկութեան մէջ խոշոր սխալ է սպրդել։ Որովհետև այդ «գողութիւնը» ինձ էր վերագրված, ուստի թոյլ տուէք պարզել ճշմարտութիւնը։

Անձնական հաշիւներից դրդված, լուր են տալիս դերձակ Շերեմետիեվին, որ ընակարաններից մէկում կայ մեծ քանակութեամբ ապրանք, որը որպէս թէ գողացել էի ես երբը նրա մօտ գրասենեկապետի պաշտօն ունէի։

Շերեմետիեվը, չը քննելով գործի էութիւնը, վազում է գաղտնի ոստիկանատուն և յայտնելով խոշոր գումարի ապրանքի կորուստը (չէ քաշվում նոյնիսկ 600 ռ. գնահատել)՝ խնդրում է գտնել։ Այն ինչ նրա խանութից միանգամայն ոչինչ չէ կորել։

Կատարված խուզարկութիւնը պարզեց, որ ոչ օրին անպէտք անարժէք ցնցոտիներից, բացի՝ ոչ մի տեղ ոչինչ չը գտնվեց։

Թիֆլիսի 2-րդ բաժանմունքի հաշտարար դատաւորը, նոյեմբերի 30-ին քննելով յիշեալ գործը, որոշեց ազատել ինձ որևէ պատասխանատուութիւնից և գործավարութիւնը դադարեցնել։

Իմ մասին սուտ լուր տուող անձը իր այդպիսի արարքի համար պատասխանատու կը լինի իշխանութեան առաջ։

Պ. Սիւ.ն

Ց. Գ.—Խնդրում եմ դերձակ Շերեմետիեվի մօտ կատարված «գողութեան» մասին տեղեկութիւն տպող միւս թերթերին արտատպել իմ այս նամակը։ Պ. Ս.

—

Պետերբուրգ, 12 դեկտ.

«Մամուլի» № 4-ի մէջ զետեղված է մի քննադատութիւն իմ «Պատրանք» վէպի մասին, Սաֆօ ստորագրութեամբ, որի մէջ է միջի այլոց ասված է հետևեալը.

«Վահունու «Պատրանքը» ֆրանսիական յայտնի վիպասան Անատոլ-դը-Ֆրանսի (ճշմարիտ՝ Անատոլ Ֆրանսի) Le lys rouge (Կարմիր Շուշան) վէպն է յիշեցնում։ Եւ կարծում ենք, որ հէնց այդ վէպի անգոյն և անաջող փոխադրութիւնն է «Պատրանքը»։

Մի հեղինակի ոլորտների մէջ մեղադրելու համար՝ խմբագրութիւնը անշուշտ պէտք է ապացոյցներ ունենայ, ուստի ես, իբրև մեղադրեալ, իրաւունք եմ համարում հրաւիրելու՝ պ. Թ. տիկ. Սաֆոյին ապացուցելու իր ծանր մեղադրանքը և դիմում եմ ձեր յարգելի խմբագրութեանը, յանուն արդարութեան և գրական աղնութեան, այդ հարցը ձեր թերթի միջոցով լուսաբանելու։ Իմ կողմից՝ ես գիտել եմ բժ. Աղասարեանին, իբրև ամենից յարգված, էջվոր և ձեռնհաս անձի, որ նա իր կարծիքը յայտնի ձեր թերթի միջոցով, յիշած երկու գրուածքները համեմատելուց յետոյ։ Վահունի

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Պետերբուրգի համալսարանի վարչութիւնը արձակեց 180 ուսանողների ուսման վճարը չը տալու համար։

✦ Թաւրիզում և Թէհրանում այժմ խաղաղ է։

✦ Պարսից կառավարութեան հեռագիրը յանուն ռուսաց կառավարութեան, որի մէջ յայտնվեց, թէ ռուսական ուլտիմատումի բոլոր պահանջները ընդունվել են, արժեց—ոչ պակաս, ոչ աւել—2000 ռ.։ Պարսից կառավարութիւնը յարակցում է, որ ինքը պատասխանատու չէ Թաւրիզի դէպքերի համար։

✦ Բագուում բռնվեց 1800 փամփուշտ, որ հասնելու էր էկս-շահին, որ ներկայումս ապրում է Թօջէնէֆէս շէնում՝ ոչ հեռու Աստրաբադի ծոցից, մի տեղացի թիւրքմէնի ընակարանում։ Նախկին շահը վարում է շատ փակված կեանք։ Համարեա ամեն շաբաթվանով կովկասեան ափից Աստրաբադի ծոցն են մտնում նորանոր լեզգիներ։ Բոլոր եկողներին դեկավարում-վարժեցնում է իշխ. Ամիրաջիբի, որ շահի աջ ձեռն է։ Ընդհանուրի կարծիքով, նախկին շահը միայն ժամանակ է վատնում, որպէսզի նոր ապատակութիւն գործէ գարնանը։

✦ Մեռան թիւրք-իտալական պատերազմում վիրաւորված Մուլիթի փաշան՝ Տրիպոլիսի թիւրքական նահանգապետը, և Ասսիմ-բէյը՝ թիւրքաց ժանդարմերիայի պետ։

✦ Եապոնիան ակտիվ պատրաստութիւններ է տեսնում միջամտելու չինական դէպքերին։ Խափանելու համար Եապոնիայի այդ վճիռը, Ամերիկան իր ռազմի նաւատորմը ուղարկել է չինական ջրերը։

✦ Խունխուզները ամբողջ Շէնսի նահանգում ահաբեկում են ազգաբնակութեանը իրանց կողոպուտներով, աւազակութիւններով ու սպանութիւններով։ Կառավարութիւնը անզօր է կռիւ մղել նրանց դէմ։

✦ Չինական կայսերական զերդաստանը վճռեց մեկնել Պէկինից։ Դրութիւնը օրհասական է։

✦ Իտալական աղբիւրներից տեղեկացնում են, որ Ալբանիայից և Մակեդոնիայից քրիստոնեայ ազգաբնակութիւնը փախչում է։ Սկիւտարում 2000 զինուոր պահանջում են իրանց արձակել, որ գնան իրանց տեղերը։

✦ Քութայիսինահանգում, ձիաթուրայում, մի կատաղած շուն կծել է մի կովի։ Այդ կովի կաթից թունաւորվել է 8 հոգուց բաղկացած մի գիւղացու ընտանիք։ Հիւանդներին բերել են Թիֆլիս։

✦ Ֆալիէրի նախագահութեամբ կայացաւ Ֆրանսիական մինիստրների խորհրդի նիստը Սպանիայի հետ մարոկկեան հարցը լուծելու առիթով։ Այդ որոշումները պահվում են գաղտնի։ Սակայն տեղեակ շրջաններում հաւատացնում են, թէ առաջ են գալու վերին աստիճանի լուրջ դժուարութիւններ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

19 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պուչիովում հանդիսաւորութեամբ բացվեց նոր կենտրոնական երկրաշարժական կայան՝ նորագոյն գործիքներով ու պարագաներով։ Երկրաշարժական գործիքները ճշգրիտ կերպով ցոյց են տալիս երկրաշարժի տեղը, անկախ նրա հեռաւորութիւնից, ու նրա ոյժը։

Արտասահմանից վերադարձաւ Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչը։

Ծառայական ճանապարհորդութիւնից վերադարձաւ ճան. հաղորդ. մինիստրը։

«Звѣзда» լրագրի խմբագիրը «Մօսքի պատգամաւորական ազատութեան վախճանը» և «Սովը» յօդուածների համար հնթարկվեց տուգանքի։

Սկսվեցին հետևեալ գործերի քննութիւնները. զինուորական դատարանում դէնվա՝ գլխաւոր զինուորական դատարանից բեկված կապիտան Պոստնիկովի գործը. պալատի առանձին ատեանում դասակարգային ներկայացուցիչների մասնակցութեամբ՝ սոցիալ-դեմոկրատների կուսակցութեան 12 անդամների մասին. գլխաւոր զինուորական դատարանում՝ վճռաբեկման կարգով Մօսկվայի ընդունող յանձնաժողովի 53 պաշտօնեաների մասին, որոնք կաշառակերութեան համար դատապարտված են 1—3 տարի բերդարգելութեան։

ԶԱԴԱՐ։ Իր ոյժի մէջ մտաւ սերբ-խորվատական լեզուի գործածութեան կարգադրութիւնը, ներքին և արտաքին պաշտօնավարութեան ժամանակ Դալմացիայի բոլոր պետական օրգանների համար, բացի զինուորականից։ Որպէս հաղորդում են «Народный Листъ» լրագրին, ֆինանսական ատեանը հրաժարվեց ենթարկվել այդ կարգադրութեան։ Լրագիրը կոչ է անում պատգամաւորներին եռանդով բողոքել համաձայնութեան խախտման դէմ։

ՄՕՍԿՎԱ։ Բացվեցին թերապէվտների և վիրաբոյժների համաժողովները։ Առաջինին ներկայ են 550 մարդ, նախագահ է ընտրված պրոֆ. Օբրէդկով. երկրորդին ներկայ էին 250 մարդ, նախագահն է պրոֆ. Վրեդէն։

ՄԻՆՍԿ։ Կախաղանի են դատապարտված 6 կալանաւորներ, որոնք մեղադրվում են անկարգութիւններ անելու մէջ հոկտեմբերին Բօրիսօվայի քանտում, որի ժամանակ սպանվեցին վերակացուն և պրիստաւի օգնականը։ Զորքը արդարացան։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Ներկայ տարվայ նոյեմբերի 5-ին Մինսկ քաղաքում քննվել է մի դատաստանական գործ՝ վերաբերեալ «Վան-Հուտէնի» կակաօյի կեղծմանը, որի հեղինակ հանդիսացել է Դինէրշտէյն անունով մի վաճառական՝ սպառելով իր պատրաստած կակաօն «Վան-Հուտէնի» ֆիրմայի ներկայացուցչի անուն տակ։ Դինէրշտէյնի մօտ կատարված խուզարկութիւնը երևան է հանել կեղծված էտիկէտներ և թիթեղեայ արկղիկներ՝ Վան-Հուտէնի էտիկէտներին և արկղիկներին ճիշդ նման։ Դինէրշտէյնը դատարանով ճանաչվել է մեղաւոր՝ կեղծիք կատարելուն մէջ և ենթարկվել բանտարկութեան մէկ տարով՝ զրկվելով իրաւունքներից։

Այս դէպքը ապացուցում է, որ Վան-Հուտէնի կակաոն գնելուց տուսանձնապէս զգոյշ պիտի լինել և պահանջել նրան արտասահմանեան փաթեթով ու կնքով՝ հաստատված կառավարութեան կողմից։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմերային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ **արագ** № 2 **գնացքը**՝ (I, II և III կարգի վագօն.) 10 ժ. 20 ր. առաւ., Ագստաֆա է հասնում 12 ժ. 44 ր. կէսօր., Գանձակ՝ 3 ժ. 18 ր. ցերեկ., Եւլախ՝ 4 ժ. 52 ր. ցերեկ., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 35 ր. երեկ., Բագու՝ 11 ժ. 43 ր. գիշ.։ **Մարդասար № 6 գնացքը**՝ (միայն I և II կարգի վագօն.) 3 ժ. 33 ր. ցերեկ., Ագստաֆա է հասնում 6 ժ. 29 ր. երեկ., Գանձակ՝ 9 ժ. 46 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 53 ր. գիշ.՝ Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 20 ր. գիշ., Բագու՝ 8 ժ. 11 ր. առաւ.։ **Պօսուսար № 4 գնացքը**՝ (բոլոր կարգերի վագոններով) 11 ժ. 18 ր. գիշ., Ագստաֆա է հասնում՝ 2 ժ. 12 ր. ցերեկ., Գանձակ՝ 5 ժ. 29 ր. առաւ., Եւլախ, 7 ժ. 30 ր. առաւ., Հաջի-Կաբուլ՝ 12 ժ. 01 րօպէին կէսօրվայ, Բագու՝ 4 ժամ 52 րօպէին ցերեկվայ։ **Խառն № 106 գնացք**՝ (IV կամ III կարգի վագոններով, երբ կարևորութիւն պատահի) 6 ժ. 32 ր. առաւ., Ագստաֆա է հասնում 10 ժ. 42 ր. առաւ., Գանձակ՝ 2 ժ. 57 ր. ցերեկ., Եւլախ՝ 6 ժ. 25 ր. երեկ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 16 գիշ., Բագու՝ 7 ժ. 12 ր. առաւ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ **Մարդասար** № $^{74}/_{75}$ **գնացքը**՝ (բոլոր կարգի վագոններով) 11 ժ. 48 ր. գիշ., Դարաքիլիսա է հասնում 7 ժ. 01 ր. առաւ., Ալէքսանդրօպոլ՝ 10 ժ. 31 ր. առաւ., Էջմիածին կայար.՝ 3 ժ. 45 ր. ցեր., Ուլուխանլու՝ 4 ժ. 12 ր. ցեր.։ (Ճանց երևան մտնելու։ Մակայն Ուլուխանլուից առանձին գնացքը երևան ուղևորվում է 4 ժ. 37 ր. ցեր., և երևան հասնում 5 ժ. 20 ր. երեկոյեան)։ Նախիջևան՝ 9 ժ. 26 ր. երեկ., Ջուլֆա՝ 11 ժ. 10 ր. երեկ.։ **Մարդասար-ապրանքատար** № $^{78}/_{79}$ գնացքը. 5 ժ. 34 ր. երեկ., Դարաքիլիսա է հասնում՝ 12 ժ. 48 ր. գիշ., Ալէքսանդրօպոլ՝ 4 ժ. 32 ր. գիշ., Էջմիածին կայարան՝ 4 ժ. 41 առաւ., Երևան՝ 11 ժ. 06 ր. առաւ., և այլևս դէնը չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ **Մարդասար** № 5 **գնացքը**՝ (բոլոր կարգի վագոններով) 5 ժ. 45 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 9 ժ. 51 ր. եր., Բաթում՝ 6 ժ. 26 ր. առաւ., **Պօսուսար** № 3 **գնացքը**՝ (բոլոր կարգի վագոններով 9 ժ. 50 ր. առաւ., Միխայլօվօ է հասնում 1 ժ. 56 ր. կէսօր., Բաթում՝ 11 ժ. 13 ր. գիշ.։ **Մարդասար** № 7 **գնացքը**՝ (II և III կարգի վագոններով) 10 ժ. 38 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 3 ժ. 08 ր. գիշ., Բաթում՝ 1 ժ. 42 ր. կէսօրին։

ԲՕՐԺՕՄԻ՝ **մարդասար** № $^{9}/_{66}$ **գնացքը**՝ (բոլոր կարգի վագոն.) 3 ժ. 23 ր. ցեր., Դօրի է հասնում 6 ժ. 02 ր. երեկ., Բօրժօմ՝ 9 ժ. 02 ր. գիշ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒՐԻՑ՝ **Մարդասար** № 5 **գնացքը**՝ 5 ժ. 07 ր. երեկ.։ **Պօսուսար** № 3 **գնացքը**՝ 8 ժ. 54 ր. առ.։ **Արագ** № 1 **գնացքը**՝ 9 ժ. 56 ր. գիշ., որը այլևս դէնը չէ գնում։ **Խառն** № 107 **գնացքը**՝ 9 ժ. եր.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ **պօսուսար** № $^{72}/_{73}$ **գնացքը**՝ 8 ժ. 25 ր. առաւ.։ **Մարդասար-ապրանքատար**՝ № $^{80}/_{81}$ **գնացքը**՝ 1 ժ. 40 ր. ցերեկվայ։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ **Մարդասար** № 6 **գնացքը**՝ 2 ժ. 50 ր. ցերեկ., **Պօսուսար** № 4 **գնացքը**՝ 10 ժ. 28 ր. գիշ.։ **Մարդասար** № 8 **գնացքը** 5 ժ. 33 ր. առաւ. (այս գնացքը Բագու չէ գնում)։

ԲՕՐԺՕՄԻՑ՝ **Մարդասար** № $^{6}/_{10}$ **գնացքը**՝ 7 ժ. 58 ր. առաւօտեան։

Ծանօթութիւն.—Ժամերային երթևեկութեան միջոցին որոշված է Թիֆլիսից Պետերբուրգ (յետ և առաջ) անմիջական, առանց վագօն փոխելու հաղորդակցութիւն՝ Բաղուի-Բօստօվի-Խարկովի վրայով Անդրկովկասեան գծի արագ № № 1 և 2 գնացքներով։ Գնացքում լինելու է մէկ միքստ վագօն I և II կարգի և մէկ վագօն III կարգի. բոլոր տեղերը պլացկարտով են։

Նոյնպէս հաստատվում է Թիֆլիս-Մօսկվա յետ և առաջ, առանց վագօն փոխելու, հաղորդակցութիւն՝ Բաղուի-Բօստօվի և Գօզլովի վրայով՝ արագ № 1 և 2 գնացքներով։ Գնացքում լինելու է միջազգային ընկ. մէկ միքստ վագօն I և II կարգի, որի համար վճարվելու է յատկապէս արժէք. մէնն մէկ հազար վերստին 8 ռ. I կարգում և 6 ռ. II կարգում։ Թիֆլիսից-Մօսկվա հաշվում է 2877 վերստ։

Առանց վագօն փոխելու հաղորդակցութիւնը Թիֆլիս-Բաղու-Բօստօվ յետ և առաջ կատարվելու է արագ № 1 և 2 գնացքներով։ Բոլոր կարգերի տեղերը պլացկարտով են։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Գուկիա, Լօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՅՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐՔԻՍԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վիճեբական (սիֆիլիս) հ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9—10 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Գ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ.—10—12 ժ. ականջի, կոկսրգի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վիճեբական, վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐԶԱՑ—12½—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—1—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐԶԱՑ—6—6½/ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Զբաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
3. 0—127

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Առաւօտեան ժամը 10—1.
Երեկոյեան ժամը 5—7.
Վեղեմինսկայա փողոց, № 8.
(Կ. Չ.) 416. 100—65

ԲԺԻՇԿ
Յ. ՄԵԼԻՔ-ՆՈՒՐԲԱՐԵԱՆ
(ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ)
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ
(Մասնագիտ. ԹՈՔԵՐԻ հիւանդութիւններ)
Ընդունե- (առաւօտեան ժ. 12—1-ը։
լութիւնը (երեկոյեան ժ. 4—6-ը։
Բէբուտովսկայա, № 66.
(ա.օ.) 1035. 100—43

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Առանձնապէս ՍՏԱՄՈՔԻՍ և ԱՂԻՔՆԵՐԻ
Ընդունելութիւնը) 10—11 ժ. առ. (երեխաների)
ամեն օր) 5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. տէլէֆօն 388.
(Չ.ու.կ.) 761. 100—57

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրոֆ. Mathien-ի մանկագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11.
(երեկ. ժ. 5—7.
Եկեղեցեանական փող. № 39. տէլ. № 1067.
(Կ. Չ. ու.) 669. 100—90

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽՈՇՈՐ ՍԻՒՐՊՐԻԶ
Կեանքի մէջ մէկ անգամ III մրցանք
600 ԱՌՈՒՐԿԱՆՆԵՐ 3 ռ. 90 կ.
1. Շրեղ Ժամաց.-անկիր՝ ուղիղ ընթացքով, 6 տ. երաշխաւորութիւնով։
2. Կանացի գեղեցիկ մատանի ամերիկ. ադամանդով։
3. Կանացի հրաշագեղ մանեակ բազմաթիւ մարգարիտներով և պատենտային փականով։
4. Կանացի օրեղ եւ էլեգանտ ապարանջան ամերիկ. «Դուբլէ» ոսկուց։
5. Դրպանի օրեղ նիւթական՝ 4 առարկայ։
6. Մի օրեղ օղ՝ ամերիկ. ադամանդ. և պատ. փականով։
7. Էլեգանտ եւ օրեղ կասուէ պօրտմոնէ։
8. Ալբօմ՝ 50 հեսաբրճ. տեսարաններով։
9. Դեր ԿՕԿԻ ծխախոտ-ապարատ անվնաս ծխելու համար։
10. Մեխանիկ. ծալվող մկրատ՝ չքեղ փուտլիարի մէջ։
11. Նոյնպէս եւ 600-ից աւելի հեսաբրճ. եւ օգտակար առարկաներ։
Բոլոր 600 առարկաների համար, հաշուելով և ժամացոյցը, առնում ենք միայն 3 ռ. 90 կ. (ժամացոյցն առանձին արժէ նոյն գինը)։ Վերադիր մասուղարկելուց մէկից մինչև 3 գարնիտուրի համար հաշվում է 55 կ., Սիբիր՝ 95 կ.։ Հասցէն՝ O-ву „МЕРКУРІЙ“, Лодзь. С. 11. 2ը հաւանած դէպքում փողը վերադարձնում ենք։
(Կ.Չ.) (В.83215) 1147. 6—4

ԻԹԱՆ ԵՒ ԼԱՒԱԳՈՒՅՆ
ԱՆԿԱՐԵԼԻ Է
ԿՕՍՏԻՒՄ 2 Ռ. 25 Կ.
Ցամաքդկանց կոստիմների համար չը կայ աւելի ամուր և գործնական կտոր քան «Կադիկա» տրիկօն, այնպիսի էժան գնով, 4¼ արշ. ամբողջ կոստիւմացու—2 ռուբ. 25 կօպ. (լաւ տեսակինը 2 90 կ.). բրդէ կտոր, որ միանգամայն համապատասխանում է իր նպատակին և տալիս է աւելի գեղեցիկ, էլեգանտ և շատ դիմացկուն կոստիմ։ Ուղարկվում է պօստով, առանց կանխավճարի։ Գոյները՝ սև, մուգ-կապոյտ, շագանակագոյն և ձիթագոյն։ «Կադիկա» տրիկօն 2 կտորից պակաս չէ ուղարկվում—4 ռ. 50 կ. (լաւ տեսակինը 5 ռ. 80 կ.)։ Ճանապարհածախքը 55 կօպ.։ 2ը հաւանած դէպքում փողը վերադարձնում ենք։ Հասցէն՝ Лодзь, фабрика шерстяныхъ издѣлій Лодзинскій Экспортъ В. 34.
(17,21,25) (В.83859) 1163. 4—3

ԻՆՉ ԳՆԵԼ
ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԵՐԻՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱՐ,
որպէսզի կարելի լինի իսկական բաւականութիւն պատճառել. ՄԻԱՅՆ
ՊԱՏԷՖՕՆ
վերջին կատարելագործութիւնը գրամոֆոնների աշխարհում սինէմատոգրաֆների և ֆոնոգրաֆների յայտնի ֆաբրիկայի
ԵՂԲ. ՊԱՏԷ ՊԱՐԻԶՈՒՄ
38 ռուբլով խոշոր ապպարատ (կարելի է և առանց բուպօրի) 20 պիէսներով՝ հռչակաւոր անձերի երգածներից։
ԽՈՇՈՐ ՐԷՊԻԼՏՈՒԱՐ ԲՈԼՈՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ։ ԼՐԻՒ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՍ-ՄԱՍ ՎՃԱՐՈՒՄՆ։
Ապպարատները 25 ռ. սկսած մինչև 150 ռուբ.։ երկ-կողմ պլասթինկաներ 1 ռ. 30 կ. և 1 ռ. 75 կ.։ Գները ֆաբրիկային պրէյս-կուրանտով։ Թիֆլիսում ֆաբրիկան բաց է թողնում իր ապպարատը միայն իր ներկայացուցիչ
ԿԱՐԼ ՇՈՒՄԱՆԻՆ
Գօլովինսկի պր. № 10, «Կրուժօկի» ներքևը։ Տէլէֆօն № 939. Մատակարարը 55 կօպ.։ 2ը հաւանած դէպքում փողը վերադարձնում ենք։ Հասցէն՝ Лодзь, фабрика шерстяныхъ издѣлій Лодзинскій Экспортъ В. 34.
1129. բար Կովկ. Օֆիցեր. Ցտա. Ընկ.։ 2—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.